

26.620

335

9-45

05 JAN 2010

335
2-45

№ 13 Հրատարակութիւն Յովհաննէս Դաւթեանի № 13

300
1547-24

ՎԻԿՏՈՐ ՉԵՐԵՍՎ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/31-1922
ИГОРЬ МЯСНИКИН

ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ՎԵՐԶՆԱԿԱՆ ՄԱՍԻՆԻՍՏՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՒ

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԿՈՒԻՇ

Թարգ. Ս. ՏԵՐ-ԱՆԱՆԵԱՆ

ՄԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
2. 2.
ԳՐԱԴԱՐԱՆ
Թ. Գ. Լ. Ի. Ս.

ԵԼԵԲԵՐԱՆՈՒԹ ՏՈՒՍՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7.
1907 (48)

19.7.JUL 2013

26620

**ՍՕՑԻԱԼԻՉՄԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԻԴԵԱԼԸ ԵՒ ԱՄԵ-
ՆՕՐԵԱՅ ԿՌԻԻԸ**

Ժամանակակից Եւրոպայի մտաւոր կեանքի երևոյթներից մեզ համար ամենախոշորն ու հետաքրքրականը, անտարակոյս և, վերջերս տիրապետող սօցիալիստական դաւանանքների այն քննական վերազննումն է, որ, այսպէս կոչւած, «Բէրնշտէյնականութեան» առթիւ մղւող բանակռիւններում իր զագաթնակէտին հասաւ: Սօցիալիզմի ժամանակակից տեսական ու գործնական մարդիկ որպէս թէ երկու բանակի են բաժանուել. մէկ կողմից՝ ուղղափառների, «օրթո-դօքսերի» խիտ ու համեմատաբար միանման գորարանակը, միւս կողմից՝ «քննադատների» երփներանգ ու խայտաբղէտ բազմութիւնը: Արտաքին այդ տարբերութեան համապատասխանում է և ներքինը: Մէկ կողմից՝ ամուր, հաստատուած ու մշակւած սիստեմ, ամբողջ ու եզակի, որպէս թէ գրանիտի միւկնոյն կտորից պոկած, միւս կողմից՝ որոնումն նոր սիստեմի ու այն

հաստատելու փորձեր, տարուբերումն մի կողմից միւսը, հակաճառութիւններ, անորոշութիւն... Եւ այդ երկու դրութեան նկատմամբ, որպէս տեսնում էք, նախապատուութիւնն ամբողջովին «օրթօգոքսութեան» կողմն է: Եւ հասկանալի է, որ մտաւոր աշխարհում ամենից առաջ յայտնի հաւասարակշռութիւն ու հանգիստ որոնող մարդիկ, պէտք է գերադասութիւն տան «հնադաւանների» սիստեմին: Եւ աւելի հասկանալի է՝ «հին դաւանանքի» ներկայացուցիչները նողկանքով են նայում քննադատների «կլանիչ» աշխատանքին: Իրաւ է, որ այդ վերջինները մարդկանց տեսական աշխարհից սկզբում աւելի շատ կորցում են, քան տալիս են: La critique est aisée, l'art est difficile,—այս մաշւած առածը վերջ ի վերջոյ արդարացի է միանգամայն: Երբ «քննադատութիւնը» դառնում է մօղա, երբ «քննական» տրամադրութիւնը հզօրապէս տիրանում է խելքերին՝ դա սովորական պարզ նշան է, թէ առանց յոգնութեան յարատւ նորանոր մտակարգութիւն ի կեանք հրաւիրող բնութեան անսպառ ստեղծագործիչ ոյժը մի անգամ ևս առաջ է անցել իր կտրիչ ու անդադար զօրացող որդի—հակառակորդից՝ մարդկային խելքը, որ հետագօտում է «իրերի ընթացքն ու պատճառները», որ ձգտում է մի հայեացքով ընդգրկել այդ բոլորը, գուշակել իր մօր—բնութեան գործի մեխանիզմը և տիրապետել այդ գործին: Եւ, դժբաղտաբար,

շատ յաճախ է լինում, որ, իր ստեղծագործութիւնների մէջ անհաւասարակշռութիւնն կատելով, այսինքն՝ սիստեմների, տեսութիւնների ու կեանքի շինարար աշխատանքի կենդանի արդիւններին մէջ, մարդկային բանականութիւնը անպտուղ հիասթափութեան է զարնւում, իր ոյժերի երիտասարդական խրոխտ ինքնավստահութիւնից անցնում է մեծի փորձով իմաստուն սկեպտիցիզմին: Տեսութիւնը չոր է, իսկ կենաց ծառը յարատւ կանաչում է ու փթթում: Զարմանալի չէ, ուրեմն, որ «ստոր փորձը—տըխմարներին խելք է» մինչև իսկ շատ խելացի մարդկանց յաճախ միայն սոսկ անվստահութիւն է ներշնչում դէպի տեսութիւնները և նախապատուութիւն՝ անսկզբունք էմպերիզմին. երբ նրանք շինծու բարոյական «գործնականութեամբ» և «կեանքի պայմանները հաշւի առնելու անհրաժեշտութեամբ» են առաջնորդւում:

Մի խօսքով ուսմունքի «հնադաւանութիւնը» մի կողմից և էլլէքտիկական «ազատութիւնը տեսութիւններից» միւս—երկու «նենգ թեքւածքներ» են, որոնց արանքում մնալը անհրաժեշտ է, բայց հեշտ չէ: Եւ, դժբաղտաբար, ժամանակակից «քննադատների» մեծամասնութիւնը չյաջողեց անվնաս անցնել օրթօգոքսական անհաշտ Սցիլլայի և օպպօրտունիզմի Խարիբդայի միջով: Մասնաւորապէս այդ բանը չէր կարող շանդրադառնալ և յեղափոխական սօցիա-

լիզմի վերջնական նպատակների ու ամենօրեամբ գործնական խնդիրների հարցի վրա— լեղափոխական տեսութեան այդ գլխաւոր, հիմնական և ամենատարրական հարցի վրա:

Ժամանակակից «քննադատները», հին յեղափոխական «դաւանանքի» իրենց հաւատը կորցնելով, յաճախ մնում են բոլորովին առանց դաւանանքի: «Վերջնական նպատակներ» մշակելու նրանց նախկին մեթոդը և այդ «վերջնական նպատակները» այնպէս սերտ ձուլւել են նրանց զիտակցութեան մէջ իրար հետ, որ, հրաժարւելով առաջինից, նրանք սկսում են մեծ երկմտութեամբ վերաբերւել վերջինին: Նրանց յեղափոխական խանդավառ կորովը երբեմն այնպէս հաստատ ձուլւել է սօցիալօգիական որոշ credo-ի, որ այդ որոշ credo-ի կորուստը սպառնում է նոր վտանգ. քանի որ քննադատն առանց նրա մինչև ականջները կխրւի «չափաւորութեան ու ճշտապահութեան» ծանծաղուտում:

Մասնաւորապէս, այդ հետեանքին է տանում յաճախ և սովորական ձգտումը, որ իշխում է մտքի ասպարիզում, ձգտումը «դէպի զարգացում հակառակութիւնների օրէնքով»: Խնդիրն, ասեմք, Հեգելեան դիալեկտիկայի օրէն է առանձին խորհուրդը շունի այստեղ, շատ պարզ է դրած: Նոր տեսութիւնները իրենց բնորոշում են, հստակ հակադրւելով: Ուր հին տեսութիւնը դրել է +a, այնտեղ նոր տեսութիւնը ևս

դնում է նոյն a, միայն մինուս նշանով, մինչդեռ, գուցէ, այդ կէտում ոչինչ a հարկաւոր չէ, ոչ պլիւսով, ոչ մինուսով, այլ հարկաւոր է լոկ B կամ C: Այդպիսի «հակառակ ինքնորոշութեան» բազմաթիւ օրինակներ կարելի է գտնել:

Յեղափոխական սօցիալիզմի «վերջնական նպատակը» հին ուտոպիզմի համար նկարւում էր բացարձակապէս որոշակի ու վառ գոյներով: Նա թւում էր անմիջապէս իրաւանացուցիչ և—որպէս այդպիսին— բռնութիւնների ուղիղ նպատակ: Գաղափարի պայծառ ջանք նրանց աչքում մըթնացրել էր անցողական աստիճանների հարցը: Անմիջական ստեղծագործութիւնը լաւագոյն սօցիալական կեանքի— ահա այն գործնական ուղիղ գործելակերպը, որ ուտոպիստներն ընդունել էին: Նրանցից մի քանիսը պարզապէս առ ոչինչ էին համարում շրջապատող հանգամանքները, ենթադրելով, թէ երկիրն ինչ քաղաքական, հասարակական և կուլտուրական վիճակ էլ ունենայ՝ միևնոյն է, միշտ կարելի է ընկերավարական առանձին վիճակներ ու ամբողջ համայնքներ հիմնել: Միւս, աւելի փորձառու մարդիկ, «հին աշխարհի» թշնամական ճնշումին զարկելով՝ աշխատում էին քաշել նրանից, նոր Աշխարհի լայնարձակ տարածութիւնների վրա կամ Խաղաղ Ովկիանոսի անմարդաբնակ կղզիներում որոնել ազատ ու անապատ հող, սօցիալական նոր շէնք կառուցանելու: Վերջապէս երրորդ տեսակի մար-

դիկ եկան այն եզրակացութեան, թէ անհրաժեշտ է ձեռք զարկել ժամանակակից կարգերի տապալման, որպէսզի ասպարէզը նախօրօք մաքրելնոր աշխարհի համար, որը այդպիսով ու այդքամբռնումով ոչ թէ հին աշխարհից պիտի ծագի ու մշակւի, այլ նրա փլատակների վրա միայն պէտք է ստեղծւի նորանից:

Մարքսի և էնգելսի այսպէս կոչւած «գիտական սօցիալիզմը» իր հիմնական էութեամբ բնորոշւեց իրեն հոգևոր նախորդներին սոսկ բացասելու, հակադրելու ճանապարհով: Նրանց հակադրելով, նա գտաւ իրեն: «Բանւորական դասակարգը ոչինչ պատրաստ երազ չունի իրականացնելու ժողովրդի վճիռների օգնութեամբ: Նա գիտէ, որ իր ազատութեան և միևնոյն ժամանակ համայնակեցութեան այն լաւագոյն դրութեան հասնելու համար, դէպի որն անդիմադրելի մղումով գնում է ժամանակակից հասարակութիւնը իր տնտեսական ամբողջ զարգացումով—նա պէտք է անցնի երկար կռիւների միջով, պատմական պրօցէսների մի ամբողջ արանով, որոնց շնորհիւ մարդիկ, որպէս և հանգամանքները, միանգամայն փոխւում են: Նա և ոչ մի ի դեպ չունի իրագործելու (sie hat keine ideale zu verwirklichen), նա նոր հասարակութեան տարրերը միայն պիտի ազատի, որոնք կործանւող բուրժուական հասարակութեան

գրկում զարգայել են արդէն *)»: Մարքսի այս խօսքերը մեր առաջ հիանալի կերպով բաց են անում մարքսիզմի այն բոլոր «չափազանցութիւններն» ու «յափշտակութիւնները», որոնցից նա հիմա ճգնում է ազատել.— և բոլոր «գաղափարների» ու «իդէօլօգիայի» ծայրայեղ արհամարհանքը, և իրերի «ներքին» տրամաբանութեամբ նոյնպիսի չափազանց բարձրացումը, և տնտեսական զարգացման «բնական-պատմական ընթացքի» այլասեռ տրամաբանելը: Ամենայն վստահութեամբ համարեա կարելի է ասել, որ մենք մարքսիզմի այդ ծայրայեղութիւններից ու թերութիւններից շատերը չէինք ունենայ, եթէ Մարքսը, իր սիստեմն ստեղծելիս բոլոր հարցերին վերաբերէր աւելի ազատ, եթէ նա այդ հարցերը լուծելու ժամանակ պակաս մտածէր այն մասին, թէ ուտոպիստներն ինչպէս էին լուծում նրանց, աւելի քիչ աշխատէր ամեն բանի մէջ ուտոպիստներին «հակառակ» ասել: Այն ասածի նման, թէ կեղծաւորութիւնը վերջին վճարումն է, որ անառակութիւնը անում է առաքինութեան, այնպէս էլ ձգտումը՝ բացարձակապէս հակառակ լինել գաղափարական նախորդներին, է վերջնական տուրքը, որ մտքերի վրա ունեցած նրանց հզօր իշխանութեանը վճարում են մարդիկ, որ եկել են նրանց փոխարինելու:

*) «Der Bürgerkrieg in Frankreich», Berlin, 1891, s. 48.

«Գիտական սօցիալիզմի» հիմնադիրները նոյնպէս այդ տուրքը վճարեցին ուստոպիզմին: Նրան յաղթել աշխատելով, իրենց հայեացքներից ուստոպիզմի բոլոր դրական ազդեցութիւնները հալածելով, նրանք դրանով իրենց էլ արգելք էին լինում միանգամայն ազատելու այն հասկացողութիւնների ու գաղափարների նեղ շրջանակից, որոնց մէջ պահած էր ուստոպիզմը: Ուստոպիստները ժամանակակից հասարակութեան զարգացման բնական ընթացքին հակադրում էին իրենց «յեղափոխական ոգևորութեան թափն» ու իրենց իղեալը, ցանկանալով այդ վերջինների օգնութեամբ ոչընչացնել առաջինը. իսկ Մարքսից վերը բերած կտորներից մի առանձին պարզութեամբ նոյն հակադրութիւնն է երևում, միայն հակառակ հետևանքով— «իղեալը» մղւում է յետ, առաջ է քաշւում «հասարակական զարգացման անդիմադրելի ընթացքը»: Քանի ուշ, այնքան բանակուով տարւելը աւելի ևս կուժեղացնի մարքսիզմի այդ գիծը ի մնաս նրա «գիտականութեան», աշակերտներն ուսուցիչներից առաջ կանցնեն— և այդ բանը Մարքսին կստիպի արտասանել նշանաւոր խօսքերը թէ, «Quant á moi, je ne suis pas marxiste» (զալով ինձ, ես մարքսիստ չեմ) իսկ էնդելսին կստիպի Կօնրադ Շմիդտին գրել մի նամակ, որի մէջ կարդում ենք. «Մարքսն ու ես ենք մասամբ մեղաւորը, որ երիտասարդ սերունդը տնտեսական կողմին աւելի ծանրակշիռ

նշանակութիւն է տալիս, քան հարկաւոր է: Մենք, ի հակադրութիւն մեր հակառակորդներին, մի առանձին շեշտով ենք ընդգծել նրանց կողմից հերքւող հիմնական սկզբունքը, ուստի և միշտ ժամանակ, յարմարութիւն ու առիթ չէինք զրտնում մնացած տարրերին էլ իրենցը հատուցանելու. այն տարրերին, որ մասնակցութիւն ունեն պատճառների փոխազդեցութեան մէջ»: Յետոյ. «Դժբախտաբար, յաճախ է պատահում, որ մարդիկ հազիւ իւրացնելով նոր տեսութեան հիմնական դրութիւնները, այն էլ միշտ ոչ ուղիղ, երևակայում են, թէ լիովին ընդունել են և կարող են առանց երկար խորհրդակցութիւնների այն ի կատար ածել: Եւ ես ազատ համարել չեմ կարող այդ կշտամբանքներից նորագոյն մարքսիստներից մի քանիսին. նրանք զարմանալի բաներ են ճառում»:

Ֆ. էնդելսի այս խոստովանութիւններն ինքեանք արդէն բաւականաչափ լայն ասպարէզ են բանում և յափշտակութեան «քննադատութեան» բացասական աշխատանքի համար, որոնց մասին այստեղ խօսք կայ, և բացերը լցնելու դրական աշխատանքի համար: Չի կարելի ասել, իհարկէ, թէ «քննադատները» չեն օգտուում իրենց ներկայացնող այդ դիւրութիւններով: Նոյն Բերնշտէյնը յայտարարում է, օր. իբր բաւականաչափ հասկանալի, թէ «իղեալն արհամարհելը, տնտեսական դործօնները բարձրացնելը մինչև զարգա-

ցման ամենակարող ոյժերի աստիճանը՝ ինքնախաբէութիւն է» *)։ «Ես, ճիշտ է, սօցիալիզմի յաղթանակը չեմ ասում թէ նրա «ներքին տրեստեսական անհրաժեշտութիւնից» կախում ունի. ոչ էլ հնարաւոր կամ կարևոր եմ գտնում զուտ մատերեալիստական ձևակերպութիւն տալ **): Թւում էր, թէ հնարաւոր էր այդ հայեցակէտի կողմնակիցներից ամենայն իրաւամբ սպասել տեսական ընդլիզմի և գործնական իդեալիզմի միջև բանական սինթէզ, մի սինթէզ, դէպի որը յանձին Պ. Լ. Լավրովի և ուրիշների այնպէս վաղ ձգտում է ուռու յեղափոխիչ միտքը։ Եւ սակայն — այդ դաւաճան նաև կային, — նոյն Բերնշտէյնը, որ գրել է վերոյիշեալ խօսքերը, գրել է և այս նշանաւոր դարձեալը. «Das Endziel ist für mich nichts, die Bewegung ist alles — շարժման վերջնական նպատակն ինձ համար — զրօ է, իսկ ինքը շարժումը — ամեն ինչ»։ Ինչո՞վ բացատրենք այս։ Նրանով նորից, որ Բերնշտէյնը, լինելով ուղղափառ մարքսիստ, չի կարողանում դուրս գալ հին հասկացողութիւնների ու գաղափարների շրջագծից, և նրա ամբողջ «քննադատութիւնը» իր վերջնական հետևանքին, հին աշխարհայեացքի միևնոյն տարրերի մասամբ այլ դասաւորու-

*) Ed. Bernstein. «Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie», Stuttgart, 1899, s. 187.

**) Ibid., s. 178.

թիւնն է միայն։ Օրթոդոքսերը հաւատում էին թէ դէպքերի մեքենաբար շողկապումը, «նախ և առաջ, անդիմադրելի ուժով ստեղծում է և կրատեղծէ զուտ սօցիալականացած արդիւնաբերութիւն, և բաւական կլինի միայն, որ նրա վրայից դէն ձգեն կապիտալիստական ձևը. և երկրորդ, թէ դէպքերի նոյն մեքենաբար շողկապումը արդիւնաբերութեան այդ կապիտալիստական ձևի և նրա սօցիալիզմի համար բոլորովին պատրաստ ներքին ամբողջ կազմի մէջ եղած հակառակութիւնը այնքան կսրէ, որ այդ զառամեալ ձևը զուտ տնտեսական պայմանների շնորհիւ չի կարողանայ այլ ևս դիմանալ ու կկործանուի։ «Իրերի ընական ընթացքի» նկատմամբ այդ լատեստութիւնը կեանքի յետագայ փաստերը նշանաւոր չափով շլատեցին։ Բայց ուրիշ «քննադատների» համար ժամանակակից տնտեսական կազմի Zusammenbruch-ի մասին եղած հասկացողութիւնները աճելով այնպէս սերտ են կցւել սօցիալիստական իդեալի յաղթանակի հասկացողութեան հետ նրա ամբողջութեամբ ու լրութեամբ, որ «իրերի ներքին տրամաբանութիւնից», որ հին կարգերի մահն ու նորերի ծնունդն է պատրաստում, նրանք իրենց սկեպտիցիզմը փոխադրեցին և «վերջնական նպատակների» շուրջն ընդհանրապէս։ Նրանք ականջ կախեցին վտանգաւոր ու երկմիտ խորհրդների՝ դէն ձգել «դա-

տարկ՝ երազներն ապագայի մասին և զբաղե-
ներկայով:

Սօցիալիզմն անուշադիր թողնելու մեղա-
դրանքներից պաշտպանելով, Բերնշտեյնն, օրի-
նակ, անզօր յարում է Մարքսի վերև բերած
դարձածքին, թէ բանւորական դասակարգը
«իրագործելու ոչինչ իդեալ չունի»: «Հէնց այդ
է գլխաւորապէս, եթէ ոչ բոլոր կէտերում, այն
միտքը, որ ես անքի առաջ եմ ունեցել» — ասում
է Բերնշտեյնը: «Սրովհետև վերջ ի վերջոյ ի՞նչ
է նրա իմաստը, եթէ ոչ այն, որ շարժումը, պրօ-
ցեսների շարքը — ամեն ինչ է, իսկ իւրաքան-
չիւր նախօրօք որոշած ու մօտագայ պարզ ըն-
դունած նպատակը, նրա համեմատութեամբ, կա-
րևոր չէ»: Տարօրինակ տրամաբանութիւն, որ
այնքան քիչ է նպաստաւոր Մարքսի ոչ պակաս
տարօրինակ հայեցակէտի համար: Միանգամայն
մուլթ է, թէ ինչ միտք կարող է ունենալ համե-
մատութեան մէջ դնել մի կողմից շարժման
«վերջնական նպատակը», միւս կողմից ինքն այդ
շարժումը և ընդունել այս կամ այն, նայած նը-
րանց «կարևորութեանը»: Այս ի՞նչ գանգատ է,
ի՞նչ «առաջնութեան» կոիւ է այս երկու ոչ միայն
իրար չհակասող, այլ մինչև անգամ տրամաբա-
նօրէն անխզելի սկզբունքների մէջ. սկզբունք,
որ որոշում է շարժման ուղղութիւնը (վերջնա-
կան նպատակը) և, որ որոշում է նրանով (ինքը
շարժումը): Խնդիրն աւելի պարզ կերպարանք

չի ընդունում, այլ աւելի ևս մնում է մուլթ յե-
տագայ մեղադրանքներից, որոնք՝ որքան էլ ան-
որոշ ու երկիմաստ են — այնուամենայնիւ հերքում
են բոլոր առաջուց եղածները: «Ես իր ժամա-
նակին յայտնել եմ արդէն, որ սիրով հրաժար-
ւում եմ ընդունել վերջնական նպատակի տեսա-
կէտի այդօրինակ ձևակերպումը, որ առիթ է
տալիս հեռուն գնալու, որպէս թէ բանւորական
շարժման իբրև սկզբունք ձևակերպած ամեն ընդ-
հանուր նպատակ պէտք է անարժէք ընդունել:
Բայց այն, ինչ տիրապետող տեսութիւններում
շարժման վախճանի վերաբերմամբ աւելի հեռու
է գնում ընդհանուր գծերով ընդունած նպատա-
կից, նպատակ, որ բնորոշում է շարժման սկզ-
բունքային ուղղութիւնն ու բնաւորութիւնը՝ ան-
պայման ցնորքներով պէտք է վերջնապէս ու, մի
ժամանակ էլ խոչնդոտ հանդիսանայ շարժման
իսկական տեսական և գործնական յառաջադի-
մութեան» *): Այս պատճառաբանութիւնը, որքան
ապագայ կազմի չափազանց մասնաւոր մասն
քննելու է վերաբերի, մի մաշած պարզ ճշ-
մարտութիւն է: Սակայն այդ պատճառաբանու-
թեան նշանակութիւնն էլ ոչնչանում է Բերնշ-
տեյնի մի նոր թէզիսով: Ահա ինչ է ասում նա
այն «դասակարգի մասին, որ բարձրանում է
պատմութեան մէջ». «եթէ նա պատկերացնում

*) Bernstein, «Voraussetzungen etc»; s. 171.

էլ է իր առաջ որևէ վերջնական նպատակ՝ դա վերջ ի վերջոյ երկրորդական նշանակութիւն ունի, քանի որ նա եռանդով հետևում է իր ամենամերձաւոր նպատակներին»։ *) Ուստի և Բերնշտէյնի խօսքերը—հին մարքսիզմի «իդեալն արհամարհելու» մասին, դուրս է գալիս մասամբ կոյրի միաջքանուն տնազ տալը...

Այդպէս. էլ չխօսելով թէ խնդիրն ինչ կերպարանք ունէր ուսուցիչսանների մօտ՝ ոչ օրթոդոքս մարքսիզմն իր անվտանգ վերաբերմունքով դէպի սիւբեկտիւ «իդեալներն» ու «իդեօլօգիան», ոչ էլ քննական մարքսիզմն իր իդեալն ստորացնելովը ամենամօտ, ամենօրեայ գործնական աշխատանքի առաջ, որ բաւականանում է իր հոշակաւոր «մանր գործերով» չեն կարող բաւարարութիւն տալ ոռւս յեղափոխականներին, որ յեղափոխական իդեալականութեան կենդանի սինթէզի և իրականութեան լուրջ գնահատութեան պահանջն ունի։ Ահա թէ որտեղից է ծագում ոռւս յեղափոխականների ձգտումը սօցիօլօգիական սիւբեկտիվիզմին, դինամիկական սօցիօլօգիային.—սօցիօլօգիա, որ ամենից առաջ յեղափոխական գործունէութեան փիլիսոփայութիւնն լինէր։ Այստեղ տեղը չէ, իհարկէ, այդ տեսութեան զուտ—փիլիսոփայական բնորոշման վրա կանգ առնելու։ Մասամբ այդ խըն-

*) Ibid, 187.



րին նւիրւած են իմ նախկին աշխատութիւններից մի քանիսը *)։ Այսպէս, սօցիալօգիական միայն ամենամօտաւոր գործնական յանդիմանները սօցիօլօգիական աշխարհայեացքի, որ սկիզբն է առել մեր «մեծ հանգուցեալները» չերցնից, Լավրօվից և Միխայլոսկուց.—գործնական յաւելումների, որ վերաբերում են յեղափոխական սօցիալիզմի վերջնական նպատակին և ամենօրեայ կուլին։

Ամեն քաղաքական կուսակցութեան ծրագիր բնականաբար երկու մասից է բաղկանում։ Մէկը կուսակցական սօցիալ-քաղաքական իդեալի արտայայտութիւնն է, իդեալ, որ հաղիսանում է բոլոր նրա ջանքերի վախճանական նպատակը։ Իս—մի ուղեցոյց ասող է, նրա ճանապարհը լուսաւորող մի փարոս, որ նրան պահում է ներկայի բոլոր բազմաթիւ, բարդ ու խճճուն հարցերի լաբիրինթոսի ոլորտներում մոլորելուց։ Հեռաւոր ապագայի մթագնած տարածութեան վրա այդ իդեալը լոյս է տալիս կուսակցութեանը, կանչում է առաջ, միշտ առաջ. նրա մէջ է պահւում կուսակցութեան յարատե դժգոհութեան գրաւականը ներկայից, թէ նա ընդունակ չէ որևէ զիջողութեան առաջ դադար առնելու և հանգչելու, իդեալական վսեմ սկզբունքի

*) Субъективный методъ въ социологии и его философскія предпосылка въ „Русск. Богатствѣ за 1901 годъ.

ազնիւ մետաղը մանրացնելով դժգոյն իրակա-
նութիւնից տարած չնչին վաստակների և յաղթա-
նակների պղծէ, մաշած կոպէկներով: Փիլի-
սոփայական յեղափոխական աշխարհայեացքի հա-
մար պատմութիւնը մի յաւիտենական կռիւ է,
մշտական շարժում: Յեղափոխական կուսակցու-
թիւններ—պատմութեան մէջ դենամիկական ըո-
պէի կենդանի մարմնացումն են դրանք: Նրանց
կոչումն այն չէ, որ պրօգրէսի «կէտը» մի տե-
ղից փոխադրեն յայտնի տարածութեամբ դէպի
առաջ: Ոչ իւրաքանչիւր կատարած վերանո-
րութիւնից յետոյ, սօցիալական ամեն լճուած
պրօքլէմի ետևը նրանք արդէն տեսնում են մի
ուրիշը, նորը և այդպէս անվերջ, անընդհատ ու
անդադար...

Այդպիսով, մի կուսակցութիւն, որ գուրկ
չէ գիտական—յեղափոխական աշխարհայեացքից
իրեն նպատակով դնում է հասարակական—քաղա-
քական մի իդեալ, որ երբէք էլ չի հանդիսա-
նում քաղաքական կեանքում «բացարձակ կա-
տարելութիւն» հաստատելու յաւակնութիւն:
Ընդհակառակը, այդ աշխարհայեացքը իր էութեամբ,
բացասումն է ամեն «բացարձակութեամբ», նա ենթադրում է մշտական շարժում,
ձևերի մշտական փոփոխութիւն, մշտական կռիւ,
մշտական տենչանք դէպ առաջ, մշտական կեանք:
Իսկ եթէ այդ կռիւը դադարէր, եթէ հասնէինք
այնպիսի իդեալական «անշարժ կացութեան»,

որ այլ ևս ոչինչ չմնար ցանկանալու—դա միև-
նոյն էր թէ մտքի անշարժութիւն, հոգու մահ:
Միօրինակութիւնը, անշարժութիւնը, թէկուզ
մենք իրերի դրութեան մեզ պատկերացնենք աշ-
խարհի ամեն տեսակ ուրախութիւններով ու
զւարճութիւններով էլ լի՝ կենսական մարդուն,
յեղափոխական տիմպերամենտով, անտարակոյս,
պիտի թւայ ինչ—որ տարտամ, անբովանդակ
ու դժգոյն... Այն հնացած դարձածքը, թէ դը-
րախտումն էլ տխուր կլինէր, ճշմարիտ է ոչ մի-
այն նրանց համար, ում համար տխուր է այն-
տեղ թագաւորող առաքինութիւնը: ճշմարիտ է
և բոլոր նրանց համար, ով չի կարող երանաւէտ
«անզորութեան» բնորոշ կողմերն իր իդեալի
հիմք ընդունել:

Իսկ այդ կողմերը դժուար չէ գտնել մինչև
անգամ սօցիօլօգիական բացարձակ կատարելու-
թեան բանստեղծական ամենավառ գոյների պատ-
կերներում—անուրջների մէջ թէկուզ հէնց այն
խնդրի շուրջը, թէ «այնտեղ, մառախուղի միւս
կողմը, կայ երանելի աշխարհ, ուր երկնի
կամարներն են փայլում, ուր հանգիստ է ու
անվրդով»: Սօցիալիզմի սօցիալօգիական «վեր-
ջնական նպատակի» վուլգար հասկացողութիւնը
նրան յատկացնում է այն գծերը, որ յատուկ
են կրօնների իդեալին, որ հասարակական կուրի
մէջ համարեա միշտ և ամեն տեղ եղել են ոչ
թէ առաջամարտ զնդի ռազմական քայլերգը:

այլ քաղցրահնչիւն մի օրօր, որ սփոփանքի ու մոռացութեան բալասան է սրսկել վիրաւորներէ ու նւաստների թարմ վէրքերին... վիրաւորողների ու նւաստացողների զգւելի ապահովութեան: Մակայն այն, ինչ պէտքական է կրօնական երեւակայութեան և սանտիմենտալիզմի դարում, անպէտք է կենդանի ու կենսուրախ հասարակական կորովի առողջ լարումի դարում: Միայն այն դարը, որ իրարից բաժանեց աշխատանքը և զւարճութիւնը, կոիւր և հանգիստը, ոմանց սղմելով կուրի ու չարաքաշ աշխատանքի բեռան տակ և նրանց կատարելապէս ուժասպառելով, իսկ միւսներին խեղդելով լիուրի յՂփութեան ամեն տեսակ զւարճութիւնների մէջ — այն դարը միայն կարող էր և ստեղծել անբնական երջանկութեան նոյնպիսի իդեալներ, որպէս — աշխատանքի ուրախութիւնների աշխարհը, որպէս անգործունեայ երանութիւնը բարիի և գեղեցկի — Օտուածութեան իդեալի պասսիւ-իմացական շփումը, կամ թէ ուղղակի նիրվանացի երանաւէտ անդորրութեան իդեալը: Իսկ մենք, կուրելով հասարակական անողորմ, բռնակալ ու վայրագ ձեւերի դէմ, որոնց մէջ ձուլուում է ամեն տեսակ շարժում, կեանքի և մինչև անգամ ամեն զարգացում մեր ներկայի հասարակութեան մէջ, այս սօցիալական կարգերը փոխարինելով միւսներով, նշոյլ անգամ չենք կասկածում, որ մեր յետագաները բարիի ու գեղեցկի

աւելի յստակ, վսեմ և նուրբ հասկացողութեամբ կգտնեն թերութիւններ ու պակասութիւններ մինչև իսկ այնտեղ, ուր մեզ համար, որ արեան ու մրուրի ծովի մէջ ենք խարխափում՝ ամեն ինչ բարերար ջերմութեան ու լոյսի անընդհատ ճառագայթներով է ողողւած: Մեզ, որ շօշափումով թափառում ենք խաւարի մէջ, լոյսի աննշան շողն իսկ շլացնում է. — զարմանալի է, որ մեր ժառանգները, որ մասամբ հէնց մեր տառապանքների ու կուրի շնորհիւ, պիտի լինեն, ի հարկէ, մեզանից բաղդաւոր, զարմանալի է, որ նրանք մեր արեգակի վրա էլ բիծ կգտնեն: Այս գիտակցութիւնը սկեպտիցիզմով ու հիասթափումով չէ, որ պիտի լցնի մեր սրտերը, այլ մեր առաջ բացող հեռանկարների վսեմութեան ու անհունութեան մաքուր գաղափարական հրրճանքով մարդկութեան համար գալիք սօցիալական պրօզրէսի անվերջ ծագող շարքերով:

Իմ կարծիքով ոչինչ այնպէս չի կարող յաջող բնորոշել ժամանակակից յեղափոխականի հոգեբանութիւնը՝ յեղափոխականի և ամբողջ աշխարհայեացքով և ամբողջ մտածութեամբ, ամբողջ համակրանքներով ու հակակրանքներով, ինչպէս Լեսսինգի նշանաւոր խօսքերը. եթէ ինքըն Աստուած առաջարկէր ինձ բնորելու մէկ ձեռքիս — յաւիտենական ճշմարտութեան տիրապետութիւնը, իսկ միւսին — յարատե ձգտումն ու մերձեցումն նորան, այն ժամանակ ես նրան կա-

սէի. ոչ, Տէր, քո ճշմարտութիւնը քեզ մօտ թող
և մի զրկիր ինձ այն բանից, ինչ միտք, գոյն և
իմաստ է տալիս իմ ամբողջ կեանքին—սրբա-
զան դժգոհութիւնը ամեն կացութիւնից և ան-
արգել անընդհատ ձգտումն դէպի լաւագոյնը-
նրան ես չեմ փոխի ճշմարտութեան և ոչ մի
հանգիստ ու անշարժ տիրապետութեան հետ, որ
ինձ վիճակէր երկնքից, անկախ բոլոր իմ ջան-
քերից...

Այս դատողութիւնը թերևս ողջմիտ չէ
լուրջ փիլիսոփայական տեսակէտից, որովհետև
կատարեալ ճշմարտութեան տիրապետութիւնը
ենթադրել է տալիս մի գոյութեան բացարձակ
կատարելութիւնը, որի հոգեբանութեան մասին
մենք ամենափոքր հասկացողութիւն անգամ չու-
նինք, այնպէս որ ոչինչ համեմատութիւն անել
չենք կարող: Խնդիրը դրա մէջ չէ: Լեասինգի
խօսքերը մի աւելորդ անգամ սքանչելի կերպով
ընդգծում են բացարձակ կատարելութեան ան-
հեթեթութիւնը, երբ նրան պարզ գաղափարական
կամ սահմանական հասկացողութիւնից ուզում
են ինչ-որ ամփոփ ու իրական բան դարձ-
նել. մի աւելորդ անգամ յիշեցնում են, որ
բացարձակ է ձգտումը միայն ի կատարելութիւն,
նրան մերձենալու գործողութիւնը միայն, և ոչ
նրա այս կամ այն իրականութիւն գտած հետև-
անքները: Հակառակ պեսսիմիստական բանաձե-
լին, ըստ որի մահը միայն անմահ է—mors—

immortajis, —յեղափոխական աշխարհայեացքը շեշ-
տուում է միւս կողմը. անմահ է նորածնունդ
կեանքը, անմահ է պրօզրէսը, անմահ է ստեղ-
ծագործութիւնը:

Ու դրա մէջ է—խորունկ կենսունակութիւ-
նը, դեռ աւելին՝ կենսական սրբազան աւիւնը
յեղափոխիչ աշխարհայեացքի: Նրանով տոգորւա-
ծին ոչինչ շփոթել չի կարող: Նա գիտէ միշտ,
թէ ինչ է անում, և կեանքի մէջ կամ իր դաւա-
նանքներում երբէք չի հանդիպի հիասթափու-
թեան, որքան էլ ճանապարհը փշուտ լինի, որքան
յողթանակներ էլ տանեն նրա վրա «աշխարհիս
ուժեղներն» ու «դարիս իշխանաւորները»: Պատ-
մութիւնը թող սկզբից մինչև վերջը տառապանք
լինի, թող մարդկայնութեան անմահ գաղա-
փարի հերոսների մարտիրոսագրութիւնը ներկու-
յացնէ: Սկզբից մինչև վերջը թող նրա առան-
ձին մոմենտների քանակն արտայայտուի բանաս-
տեղծի խօսքերով «չկայ մեծն Պատրոկլիս, կեն-
դանի է անարգն Թերսիդէս»: Այստեղից չոռե-
տես ոչինչ եզրակացութիւն անել չենք կարող
հէնց միայն նրա համար, որ մեր հայեացքը ներ-
կայի վրա է կանգ առնում. իսկ ոչինչ աւելի
կարճատև ու շուտ անցողական չէ, որպէս ներ-
կան օր. անդադար նահանջում է ապագայի ա-
ռաջ ու անդադար հնացած անցեալի փոխում:
Սակայն Թերսիդէսները հէնց ներկայի մարդիկն
են. մարդիկ, որ թոյլ ձեռքերով փարուում են

խուսափող այդ ակնթարթին և նրա հետ անյայտանում ասպարիզից:

Յեղափոխականը չէ, որ նախանձով պիտի նայէ այդ «դրուժեան տէրերի» բաղտին, որոնք «տէրեր» են երևում հէնց այն պատճառով, որ հողմացոյցի նման դառնում են տիրող հոսանքների համեմատ, որով և միշտ «յարմարւոյններ» են հանդիսանում: Յեղափոխականը գիտակցօրէն հրաժեշտ է տւել մօտիկ ապագայի խաբուսիկ յաղթանակին: Նա գիտակցօրէն ընտրել է հեռաւոր ապագային ծառայելու գործը, նրան կենդանի մարմնացնողի, կրողի ու կարապետի դերը: Շփոթել անկարող են նրան այն խղճուկ տափակութիւնները, վերջոյի ու ոսկու ստրուկ այն միջակութիւնները, որոնք որպէս թէ, ներկայում յաղթանակում են: Նրան շացնել չեն կարող նրանց էժանագին դափնինները, որոնք յաղթողի հպարտ ձակատը զարդարող բանաստեղծական պսակից թափւում են սովորական ապուրի մէջ — հէնց այն ոսպէ ապուրի մէջ, որի համար դեռ հնադարեան Եսաւը իր անդրանկութեան իրաւունքը ծախեց: Յեղափոխականը երբէք և ոչ մի դէպքում իր այդ իրաւունքը չի վաճառի, որպիսի ֆիզիքական ու բարոյական տանջանքներով էլ կաշկանդէր նրան «երկրի բնական ընթացքի» տարերային, անհոգի վայրագութիւնը, մի ընթացքի, ուր «ձրի ոչինչ չի տրւում — բաղտը քաւութեան նոխապներ է խնդրում»: Ուս-

տի և, երբ մենք տեսնում ենք, թէ խաչի ծանրութեան տակ ամբողջովին արիւնաթաթախ, տրորւած քարշ է գալիս արդարը, մինչդեռ յանցաւորը մեծարանքների ու փառքի է արժանանում», այնուամենայնիւ մեզ չի ձգում այն ըմբոստ գիտակցութիւնը, որով մեր ծերուկ պատմագրութեան մասին մենք ասում ենք նոյնը, ինչ Գալիլէյն էր երբեմն ասում երկրագնդի մասին. «այնուամենայնիւ նա շարժւում է»: Շարժւում է, թէև յաղթանակներով շացած թերսիդէսները շատ անգամ երևակայում են, թէ նրա շարժմանը «վերջակէտ են դրել»: Շարժւում է, թէև երբեմն երկրագնդի նման նա էլ առաջին հայեացքից անշարժ է երևում: Թերսիդէսները չեն, ի հարկէ, որ պիտի հաւատան դրան. չէ նրանք երբէք չհաւատացին Գալիլէյին էլ: «Ե՛հ, հեքիաթներ պատմեցէք, մխիթարւեցէք, սակայն վարչութիւնը բարեկարգութեանց — ահա ինչն է գլխաւորը»: Եւ բարեկարգութեանց վարչութիւնները, Բաստիլեանները, Պետրապօլիօվկները ու Շլիսսելբուրգները դեռ յաղթական կանգնած են իրենց տեղերում, ուստի և այդ «դրական մարդիկ», չափաւորութեան ու ճշտապահութեան հերոսները պիտի համոզւեն թէ, իրենց ոտների տակ, գետինը, անգամ երկրագունդն իր ամբողջութեամբ նոյնքան հզօր է ու անասուն: Երանի, ով հաւատայ, աշխարհում ապահով կապրի նա: Իսկ մենք օժտւած ենք

այլ հաւատի երանութեամբ. հաւատ, որ փոխուում է գիտակցութեան, որովհետեւ նա ամբողջ անցեալ պատմութիւնն իրեն հիմք ունի—

ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ—ԲԱՂՏԻ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԿԱՄՔՆ
ԷԼ—ՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՄԵՉ ԸՆԿՆԻ:

Այո, և ոչ միայն ընկնի, այլ և ընկնում է: Կարելի է պնդել, որ նա մեր ետևից հասէ-հաս է, բայց չի կարողանում բռնել, որովհետև մենք ինքներս շարունակ նրանից առաջ ենք անցնում: Մենք նրա համար չենք ինքնաբաւական, չաղթանակ տարած հանգստացողի դերում երևում, որ, որքան *femora mutantur* մենք էլ *mutantur in illis*: Սպարտայի դրոշակների տակ մարտնչող սարդակներից մենք հետզհետէ դառնում ենք ժակերներ ու գիւղացիական պատերազմներին մասնակցողներ, չակորեաններ ու մօստանիարներ, չարտիստներ ու ընկերավարականներ, ժամանակակից սօցիալիստներ ու յեղափոխականներ: Եւ ինչո՞ւ ահա մեզ չի վրհատեցնում երբէք մինչև իսկ այն հանգամանքը, որ հասարակական կարգերի և ոչ մի, անգամ չափած-կըշռած և գիտականօրէն հաստատած իդեալը յարատեւ չէ, օր պատմութեան կառքի սահման ու դարար չճանաչող սրարշաւ ընթացքը անվերջ առաջ է անցնում նախորդ սերնդի անգամ ամենաչանգուզն ենթադրութիւններից ու անուրջներից: Ինչ՞ վնաս: Մինչև իսկ այն կոնկրէտ ձևերը,

որոնց մէջ մեր առաջ նկարուում են սօցիալական լաւագոյն կարգերը, մի շարք տասնեակ դարերից յետոյ թող յետամնաց լինին. թող նրանք, ով պաշտպան կանգնեն այդ ձևերին, պահպանողական կամ նոյն իսկ ըեակցեօներ ճանաչւին: Մեր ճշմարտութիւնը դրանից ստութիւն չի դառնայ, և մենք՝ կոյրեր չենք, որ ինքներս մեզ խաբոււմ ենք: Մեր ճշմարտութիւնը—ամենաիսկական ճշմարտութիւնն է, քանի նա առաջ է մղում պատմութիւնը. նա շինծու չէ, քանի դեռ կենսունակ է, քանի դեռ մարդկութեանը չի տւել այն բոլոր պարունակութիւնը, որով յագեցած է: Եւ անարգարութեան ծառայողներ ու ողորմելի կոյրեր ոչ թէ մենք ենք հանդիսանում,—այդպէս կլինին նրանք միայն, ով այն ժամանակ անզօր կջանայ, երբեմն պատմական կենդանի աւիւնով լի սիստէմի անպարունակ կմախքից քաշ գալ, այդ, այժմեանից իսկ կերւած հաւկիթի դատարկ կեղևից, ով այդ միանգամայն անպէտք կեղևի պատճառով արգելքներ ու խոչնդոտներ կդնի շարժման յառաջխաղացութեանը: Նրանք—մեր յաջորդները չէ, այլ «այն միւսները, դեռ անյայտ ընտրեալներն» են, որ այն ժամանակ պատմութեան ներգործող մօմենտի մարմնացումը պիտի լինեն, որպիսին ըստ մեր կարողութեան հանդիսանում ենք, կամ փորձում ենք հանդիսանալ մենք:

Այսպիսով, «մեր վերջնական նպատակը»—

բացարձակութիւնն չէ, որից այն կողմը ոչինչ չլինէր, այլ ուղղակի ընդհանուր մի սկզբունք, որի մէջ համախմբուում են բոլոր մեր մասնաւոր նպատակները, — նման այն հանգամանքին, ինչպէս ներկայի համար «վերջնական պատճառի» հասկացողութիւնը չի կարող նշանակել միւլտիպլի, ինչ բնագանցական «բոլոր սկիզբների սկիզբը» այլ միայն կարող է մասնաւոր, եզական պատճառները միացնել: Ուստի և զանազան «գրական մարդիկ» և «աստիճանական զարգացման կուսակիցները» միանգամայն ի դուր կարծում են, իբր իրենց մեզնից բաժանողը իրենց շրջահայեացողութիւնն է և մեր հակումը՝ անիրագործելի կատարելութեան, կախնոտ գետերի ու թըթւաշ, անուշ համ եզերքների մասին, երևակայութեան մէջ ընկնել: Մեզ բաժանողը բոլորովին այլ բան է: Մենք, պատմական պրօգնէսի մեր հասկացողութեամբ առաջնորդելով, խորխտ քննադատութեան սուրը չենք քաշում շողացնել ում գլխին էլ լինի: Մեզ, սօցիալիստ-յեղափոխականներիս համար մի ասպարէզ չկայ, ուր փոխադարձ անդադրում ու անվերջ պայքարումները չտատանելին արմատական հիմքերը: Իսկ տիպիք «աստիճանական զարգացման կուսակիցներն» ու «բարենորոգչականները», թէպէտ և յարատև փոփոխութեանց անհրաժեշտութիւնն ընդունում են, այն էլ, կամ տիրող կարգերի մասնակի շրջաններում լոկ, նրա անսասան հիմունքը յար-

գել շարունակելով, կամ լոկ այդ կարգերի այս կամ այն կողմի նկատմամբ — օրինակ, քաղաքական կազմի մէջ. — միջնդեռ նոյնանման անվերջ պրօգնէսի հնարաւորութիւնն ու անհրաժեշտութիւնը ընտանեկան, սեփականութեան, ազգայնական յարաբերութիւնների և այլն շրջաններում ընդունել տհաս են: Բարենորոգչականի ու յեղափոխականի իդեալների դրական բովանդակութեան մէջ եղած տարբերութիւնը կապ ունի հէնց այդ բանի հետ: Առաջինի իդեալի վրա միշտ դրոշմաձ է անմիջապէս իրագործելու, կոնկրետութեան, չափաւորութեան ու ճշտապահութեան կնիքը. երկրորդի իդեալը, ընդհակառակը, գուտ սկզբունքային բնոյթ ունի և պարզ է իր հիմունքներով միայն, և ոչ մանր մունր գծերով: Առաջինների իդեալը հազիւ միայն այս կամ այն նախարարութեան պաշտօնական նախագծի գրութեան մէջ տեղ չի բռնում. երկրորդի իդեալը, ընդհակառակը, նրան ծառայում է միայն, իբրև բարձրագոյն առաջնորդող սկզբունք ի գնահատութիւն օրւան չարիքը կազմող սօցիալական վէրքերը «բուժելու» այն նախագծերի, որոնց իբր ամենաբուժիչ դեղեր, այլասեռած սօցիալ-բարենորոգչութեան իմաստականները շարունակ առաջ են քաշում: Եւ յեղափոխականի աչքը քանի աւելի է բացուում, քանի ուժգին ու խորն է նա պատուում իդեալական ապագան մեր առաջ ծածկող վարագոյրը՝ նոյն-

քան աւելի ուժեղ թափով է, ի հարկէ, պատկերանում այն անհամապատասխանութիւնը, որ գոյութիւն ունի ներկայ պատմական խնդրի մեծութեան և անձնական կեանքի կարճատև ընդմիջումի կամ մարդկային անհատական ոյժերի ծաւալի մէջ:

Այդ կողմից «բարենորոգչականները» բախտաւոր են: Նրանք շատ պարզ միջոց են գտել այդ անհամապատասխանութիւնից խուսափելու ոչ թէ իրենց անհատական կորովը կամ անհատական ոյժերը բարձրացնելով ու կապակցելով իբր ներգործող մի կազմակերպութիւն, այլ ընդհակառակը, պարզապէս աշխարհայեացքը սահմանափակելով, պատմական հեռատեսութիւնը կարճատեսութեան փոխելով, կէստ ու հատիկ ծառերի պատճառով էլ անտառը չտեսնելով ու նրա գոյութիւնը մոռանալով, այն «վերացական» երազանքի հաւասարեցնելով: Իս իր տեսակէտից «գործնական» է, և անձնական կեանքի մանրութեան, անձնական ոյժերի ու սահմանած «վերջնական նպատակների» ընդարձակութեան միջև եղած անհամապատասխանութիւնը, ի հարկէ, ուղիղ յարաբերական եղանակով պակսեցնում է նմանօրինակ «գործնականութիւնը»:

Սակայն ուղիղ յարաբերականութեամբ նրանց համար բարձրանում է մի այլ անհամապատասխանութիւն. նպատակի իրագործւելու հետեւանքների և հոգու լաւագոյն տեսչերի, ո-

րոնումների մէջ... Իւրաքանչիւր մարդ իր սրբտում պէտք է ունենայ մի «սրբութիւն սրբոց», որի շուրջը կենտրոնանային ամենալաւ յատկութիւնները, նրա հոգու ամենավսեմ ձգտումները. որ, նրան բարձրացնէր իրականութիւնից վեր, ընդունակ լինէր ամենալաւ ոգևորութիւնն առաջացնել և նրա գործերին այդ հաստատակամութիւնը անդրդեւելիութիւնն ու կորովը ներշնչէր, առանց որի մարդը ըստ աւետարանի «նրման է այն եղեգնին, որին տարուբերում է հողմը»: Արդէն որքան հասարակական իդեալը մանր է, որքան նրա ներկայացուցիչների եռանդը նւազ է, նոյնքան էլ փոքր է նրանց անձնագոհութեան պատրաստակամութիւնը, այնքան աննշան է նրանց ըմբոստութիւնը, վճռականութիւնը ճգնաժամի ըոպէներին: Պատմական անողոր օրէնքն է այդպէս, որ անխնայ դատապարտում է բոլոր ժամանակների ու ազգերի «չափաւոր պրօգրեսիստներին», նրանց յայտնի թուլամորթութիւնը, անվճռականութիւնն ու փորոգութիւնը խորագանելով ծանր կոււի շրջանում և նրանց յանդուգն յոխորտանքը լոկ հակառակորդին տապալելուց յետոյ, երբ, ի հարկէ ոչինչ ջանք հարկաւոր չէ ընկածին տիրելու, «նրա հանդերձներն իրենց մէջ բաժանելու և նրա պատմութեանը վիճակ ձգելու համար»...

Ինչու անհա, թէև սօցիալիստ-յեղափոխականները գիտեն որ մասամբ «մեր թշնամու

Թշնամին—մեր ընկերն է», և որ ըէակցիօն ոչ-
 փերի դէմ կուելիս նրանք մինչև մի որոշ տեղ
 չափաւոր պրօգրէսսիստների, լեբերալների ևն
 հետ միասին պէտք է գնան,—նրանք յօգուտ
 այդ դաշնակցութեան շահերի չեն կարող մազա-
 չափ անգամ շեղել իրենց ծրագրի սկզբունքա-
 յին մասից: Որևէ «ինքնակրճատում» կամ
 «ինքնաթագնուում» այդ դէպքերում ինքնասպան
 մի աշխատանք կլինէր: «Սօցիալիզմը—գերա-
 գոյն բարոյական ոյժն է ժամանակակից հասա-
 րակութեան, և թագցնել նրան, կամ այս ու այն
 եղանակով ջանալ թուլացնել Ռուսաստանում—
 միևնոյն է ինքնակամ ոտի տակ տրորել այն ա-
 մենը, ինչ մեր ազատագրական շարժման կեանք-
 քն ու հոգին է կազմում: Մի կռիւ, որ նման
 է մերին, ամբողջովին պահւում է հատ—հատ
 անձնաւորութիւնների անձնագոհութեան, իրենց
 կեանքը, ազատութիւնը, մի խօսքով ամեն ինչ հայ-
 բնիքի բարօրութեանը նւիրելու ընդունա-
 կութեան վրա: Որքան լայն, խորն ու բազմակողմա-
 նի է այդ հնարաւոր երջանկութեան գաղափարը,
 այնքան աւելի աշխոյժով է արթնանում ու այնքան
 աւելի ըմբոստ է հնչում մարդկային սրտում հա-
 սարակական հզօր բնագղը: Ոչ որ իր կեանքը չի
 տայ օրինակ տեղական ինքնավարութիւնն աւե-
 լի ընդարձակելու կամ մի այլ թէկուզ և ամենա-
 օգտակար մասնաւոր բարենորոգութեան համար:
 Սակայն հազարաւոր մարդիկ ազատակամ մահ

են ընդունում, երբ նրանց հոգիներում այն վառ
 հաւատն է փայլում, թէ մարդկութեան երջան-
 կութիւնը այդ գնով պիտի գնւի»:

Կար ժամանակ, երբ սոսկ քաղաքական ու
 քաղաքացիական ազատութեան գաղափարը մարդ-
 կանց մէջ կարողանում էր առաջացնել այդ հա-
 ւատը. արդ, այդ ընդունակութիւնը ժառանգա-
 բար անցել է մեր ժամանակի մեծագոյն գաղա-
 փարին—սօցիալիզմի գաղափարին: Եւ ինչու
 ահա, մինչև իսկ մեր ժամանակի բոլոր «կեն-
 սական հարցերը», ինչպէս քաղաքական ու քա-
 ղաքացիական ազատութեան հարցը, մինչդեռ
 ուրիշ երկրներում կալող էին լուծում ստանալ
 բուրժուա—լիբերալ կամ ռամկավար—արմատա-
 կան կուսակցութիւնների միջոցով՝ Ռուսաստա-
 նում լուծել կարող են միմիայն յեղափոխա-
 կան սօցիալիզմի միջամտութեամբ:

Կուսակցութեան ծրագրի այն մասը, որ նը-
 րա բոլոր մասնակի նպատակներն ու ձգտումնե-
 րը համախմբում է իբր մի «վերջնական նպա-
 տակ», բնականաբար յայտնի մշտատեւութիւն ու
 անփոփոխելի բնոյթ ունի,—ի հարկէ, ոչ բացար-
 ձակ, այլ յարաբերական միայն, հստակապատկան:
 Որքան շատ յեղափոխական, որքան շատ պատ-
 մական—հեռատեսութեամբ կզինւի կուսակցու-
 թիւնը, այնքան երկարատե ու անփոփոխելի է

նրա գաղափարը: Ուստի և, ծրագրի այդ մասը մենք կարող ենք անւանել սկզբունքային կամ ծայրայեղ (մաքսիմալ): Նա տեղի ու ժամանակի փոփոխւող պայմաններին ամեն անգամ չի յարմարեցւում: Ընդհակառակը, նրա աստիճանին պէտք է որ բարձրանայ ամեն կոնկրետ իրականութիւն, տեղական ու ժամանակի պայմաններ իւրաքանչիւր դասակարգութիւն: Յեղափոխիչ սօցիալիզմի վերջնական պահանջները միջազգային են. նրանք ընդհանուր են բոլոր ժամանակակից ազգութիւնների և պետութիւնների համար, բոլոր յետամնացների համար ոչ պակաս, որքան և առաջադէմների: Ծրագրի սկզբունքային մասի ամենաաննշան կրճատուձն իսկ անկարելի է արդարացնել ոչ մի «բացառիկ հանգամանքով»:

Սօցիալիստական ծրագրում առաջադրած պահանջները չի կարելի սահմանափակել վերջնական, իդեալական նպատակների սկզբունքային ձևակերպութեամբ միայն: Որպէս յեղափոխականներ, մենք ապագայի մարդիկ ենք: Սակայն երբէք էլ այդ չի նշանակում, որ մենք լոկ երազողներ, երևակայողներ ու ուտոպիստներ պիտի լինենք. որ ապագայի համար աչքաթող պիտի անենք այն ներկան, որի մէջ մենք ապրում ենք ու գործում: չէնց այն պատճառով, որ մեր իդեալը—հետևանք է մեր պատմական հեռատեսութան, մենք բաւականանալ չենք կարող լով

նրան իր լրիւ ամբողջութեամբ գոյութիւն ունեցող կարգերի տեղ դնելով: Անցան այն ժամանակները, երբ յեղափոխական սօցիալիզմը կարողանում էր յուսալ, թէ իր վերջնական նպատակները կիրականացնի միանգամից, ողջամբ, մի հարուածով, միաժամանակ հասարակական ժամանակակից ամբողջ շէնքը, ներքևից վեր, «յեղափոխական ոգևորութեան մի թափով» կվերաշինէ, ինչպէս գեղեցիկ կերպով արտայայտել է հանգուցեալ Ստեպնեակը: Ստիպուած ենք անցողական շրջաններ որոնել: Ստիպուած ենք յեղափոխութեանը նայել ոչ թէ իբրև էվոլուցիային հակադրութեան, այլ որպէս նրա մօմենտը միայն, կամ մինչև իսկ որպէս շատ մօմենտների մի գումարի. մօմենտներ, որոնցից ոմանք կարող են ռազմական, միւսները—խաղաղ կերպարանք յունենալ: Եւ ահա, ամեն ժամանակ, ամեն առանձին երկրում սօցիալիստական կուսակցութիւնները իրանց պահանջների մի որոշ մասին առաջին տեղն են տալիս, որպէս ամենակենսական, տմենաանհրաժեշտ պահանջներ ամենամօտ ապագայում: Այդպիսով, ծրագրի հիմնական, սկզբունքային մասի պահանջների կողքին և յանուն այդ պահանջների յայտնւում են այլ տեսակի պահանջներ—ամենամօտաւոր, մինիմալ, աւելցուկ պահանջներ:

Ժամանակակից սօցիալիստական տէրմինալօգիայում minimum-ծրագրի տակ սովորաբար

գործնական պահանջների այն դասաւորութիւնն է միայն հասկացում, որի իրականութեան գրտնելը շատ հնարաւոր է համարում առաջ, քան բանւորական դասակարգն իշխանութիւնն իր ձեռքը կառնի, այսինքն սօցիալիստական, հետեւաբար և բուրժուական կարգերի մէջ ապրող հասարակութեան մէջ: Դժւար չէ, սակայն, տեսնել, որ ծրագրի բաժանումը՝ վերջնական նպատակի և ամենամօտաւոր պահանջների, իր իմաստը չի կորցնում և բուրժուական կարգերի վճռական տապալումից յետոյ: Կօմմունիստական կուսակցութեան Մանիֆէստում Մարքսը նկարում է սօցիալիստական կազմի սկզբնական ծրագիրը, մի կնիքով, որի նպատակն է իսկական ըսկիզբը, սօցիալիստական կազմի իսկական հիմքն ու բնագծելը: Սօցիալիզմի աւարտած իդեալի վերաբերմամբ դա նոյնպէս minimum-ծրագիր է միայն: Սակայն minimum-ծրագրի վերաբերմամբ, այդ բառի սովորական մտքով, դա կլինի, այսպէս պատճառ, երկրորդ կարգի minimum-ծրագիր: Յետոյ մենք կխօսենք minimum-ծրագրի մասին ընդհանրապէս, կամ այն մտաւորապէս անվերջ փոփոխւող minimum-ծրագրերի, որոնց ամբողջութիւնը ոչ թէ հակադրութիւն է սօցիալական ընդհանուր իդեալին ու վերջնական նպատակին, այլ որպէս թէ լուծւում է նրա հետ, իրենից ներկայացնելով անվերջ մի պրօցէս իդեալականը գործնական, ընթացիկ դարձնելու:

Ծրագրային պահանջների այդ երկրորդ միւնիմալ մասը ի հակապատկեր առաջին, մաքսիմալ բաժնին, իր իսկական էութեամբ զանազան երկրներում և զանազան պատմական ընթացներում միատեսակ լինել չի կարող: Նա ժամանակի պահանջների շարունակ փոփոխւում է, և գործնականապէս էլ հէնց ծանրութեան կենտրոնը մէկ կէտից միւսն է շաղժւում, նայած թէ ներկայ մօմենտում ինչ ամենամանրաժեշտ պահանջներ ունին յեղափոխական կուսակցութիւնն և ժողովրդի այն խաւերը, որոնց շահերը նա ամենամերձաւորն է ներկայացնում: Որ չափով ամենակենսական պահանջներին բաւարարութիւն է տրւում, այն չափով առաջնակարգ տեղ բռնում են ուրիշները, ըստ իրենց կարևորութեան ու անյետաձգելիութեան: Այդպիսով, ծրագրի այդ ընթացիկ մասում բնական ճանապարհով հիմնւում է կուսակցութեան բազմաթիւ մասնաւոր նպատակների տրամաբանորէն և գործնականորէն անհրաժեշտ մի աստիճանաւորութիւն. և անթիւ հետևողական աստիճանների գումարով այդ պահանջները ներկայացնում են իդեալի շարունակական մշակումն ու իրականացումը: Բոլոր այդ մասնաւոր նպատակները որոշ մօմենտում, որոշ պայմանների մէջ միատեսակ դժւարութիւն չեն ներկայացնում իրականութիւն դառնալու համար: Այդ նախ և առաջ, երկրորդ, կուսակցութեան մի մասնաւոր

նպատակի իրականացումը յաճախ լաւագոյն միջոց է ուրիշ շատերի իրականացնելն աւելի մօտեցնելու: Հէնց այդ երկու հայեցակէտն է, որոնցից մէկը ամենաքիչ ոյժ կորցնելուն ու հետևանքների խր-նայողութեանն է վերաբերում, որ վճռական դեր պիտի խաղան այն պահանջի (կամ այն պահանջների) ընտրութեան գործում, որ կազմակերպութիւնը ներկայ մօմենտում ամենահերթականը պիտի համարի: Մէկ կողմից մեր առաջ տարածում է հասարակութեան ամենաբարձր օգտակարութեան գիծը, երկրաչափական այն խիզախ ուղղագիծը, որ ներկայ մօմենտից տանում է անմիջապէս սօցիալիզմի գերագոյն իդեալին: միւս կողմից՝ ամենափոքր ընդդիմութեան գիծը, այն ոլոր-պտոյտ ծուռ գիծը, որ համաձայն արտաքին պայմաններին ամեն անգամ իր ուղղութիւնը փոխում է. և այդ երկու գիծը պէտք է ձուլին մի նոր, բանական գծի մէջ նրա համար, որպէսզի ժողովրդական կուսակցութեան գործնական ու կենդանի գործելակերպն ստացւի: Ուրիշ խօսքով, կուսակցութիւնը պարտաւոր է գտնել նրանց միջին, հաւասարագոր ճանապարհը և այդ հաւասարագորի տարբեր տարածութիւնները հետևողաբար պէտք է իրենց կենտրոնական տեղը Actionsprogramm-ում ունենան, որպէս գերմանացիք են ասում, այնտեղ, որ մենք կուսակցութեան գործելակերպի ուղին կանաւնէինք:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ սօցիալ-

յեղափոխական կուսակցութիւնների մինիմալ պահանջներից շատերը կարող են ընդհանուր լինել-և յաճախ ընդհանուր են-չափաւոր ազատամիտների, ռամկավարների, քաղաքական լիբերալների և արմատականների զանազան ֆրակցիաների, մի խօսքով, առհասարակ «միջին», բարենորոգչական կուսակցութիւնների պահանջների հետ: Բայց այստեղ ևս, «միջինների» ու «ծայրայեղների», «յեղափոխականների» ու «բարենորոգչականների» մէջ սկզբունքային մի խոր տարբերութիւն է մնում: Մինչև անգամ սօցիալիզմի պահանջների «մինիմալ» ծրագիրը երբէք համարեա բոլորովին նոյնանման չէ, մինչև իսկ ամենաառաջադէմ ռամկավարների ծրագրի «սկզբունքային» մասի հետ: Խնդիրը նրանում է, որ սրանք կամ նրանք «բարենորոգութիւնները» կշռելու միատեսակ չափը չունեն: Մէկի համար բարենորոգութիւնը պարտաւոր է ընդմիջտ վերականգնել կենդանի յարաբերութիւնների կորսւած ներդաշնակութիւնը, և նրանց միջից վերացնել հասարակական այլևայլ տարրերի անտագօնիզմը. միւսի համար, ընդհակառակը, միջոց է միայն յետագայում կոիւն աւելի արդիւնաւէտ անելու: Առաջինի համար բարենորոգութիւնը—միջոց է հաշտեցնելու անհաշտին, տեղաւորել երկու աթոռի մէջ, երկրորդի համար—վերջնական յաղթանակի մօմենտը միայն մօտեցնել, բարելաւե-

լով կենսական պայմանները, ընդհանուր Ֆիզի-
քական և մտաւոր մակերևոյթը, հետևաբար և
աշխատանքի դասակարգերի ռազմական ընդունա-
կութիւնը բարձրացնելով: Ուստի և միշտ միատե-
սակ չեն «բարենորոգութիւնները», այն «գործ-
նական բարելաւումները», որ ցանկանում են բա-
րենորոգչականը և յեղափոխականը: Վերջինս
կարող է հաւանել այնպիսի «բարենորոգութիւն-
ները» միայն, որոնք կնպաստեն նրա վերջնա-
կան նպատակի մօտեցմանը: Իսկ առաջինը հա-
ւասարապէս համակրում է և այնպիսի «բարենո-
րոգութիւնները», որոնք իրենցից աւելի ոչինչ
չեն ներկայացնում, քան գեղեցիկ կարկատան-
ներ հին շորի վրա, ու ծածկում են մեռնող
կարգերի ամենախոշոր արատները, որոնք հա-
սունքն աջած պահանջին փոխանակ իրական-
նիւ լով կարծեցեալ բաւարարութիւն տալով,
հասարակական զիտակցութիւնը միայն մթնա-
ցնում են: Ըստ էութեան, բարենորոգութիւնը
երբէք էլ յեղափոխութեան հակապատկերը չէ:
Խնդիրը նրանում է, թէ որպիսի պարագանե-
րում և ինչպիսի բարենորոգութիւն է: Այն-
պիսի բարենորոգութիւններ էլ կան, որ մեռնող
կազմի հեռաւոր ձևափոխութիւնը ոչնչով չա-
րագացնելով, պատմական վախճանական ձեռն-
տու մօմենտը միայն կարող են հեռու վանել, հին
կազմի դիմադիր ոյժը միայն ամրացնել, զօրե-
ղացնել ժամանակի պահանջների դիմաց: Եւ

թէ և իր քթից այն կողմը չտեսնող «գործիչը»
նման «բարենորոգութիւնները» որոշ «բարելա-
ւումն» կհամարէր, մենք, որպէս սօցիալիստ-յե-
ղափոխականներ, պարտաւոր ենք նրանց կեղ-
ծիքը, արտաքին խաբուսիկ փայլը մերկացնել,
պարտաւոր ենք երբեմն կռիւ մտնել նրանց հետ,
յանձին նրանց նկատել այն փայտը միայն, որ
դրւում է պատմութեան անւրի մէջ, նրա ըն-
թացքը կասեցնելու համար: Մեր աւելցուկ,
գործնական ծրագիրը շատ հեռու է այն նեղ
մտքով «գործնական» լինելուց, որով «գործնա-
կանը» հակադիր է «իդեալականին»: Մեզ հա-
մար գործնականը այն է, ինչ ծառայում է ի-
դեալականը իրականացնելու ամենամերձաւոր,
սկզբնական գործունէութեան շրջան. գործնա-
կանը—դա մեր տեսակէտից ոչ այլ ինչ է, եթէ
ոչ իդեալականն im Werden, կեանքի մէջ իր
զարգացման գործողութեամբ, իդեալականն իր
սազմային աստիճանում:

Հէնց նրա մէջ է կայանում յեղափոխականի
ակնածելի գերազանցութիւնը, որ նրա հայեաց-
քը շարունակ յառած է ապագային, որ նա այն
կամ այն բարենորոգութեան անմիջական շօ-
շափելի հետևանքները ծանր ու թեթև նսնելով
չի բաւականանում, այլ միշտ ձգտում է աւելի
հեռուն նայել, քան որ իր առաջն է կատարում:
Նա շատ լաւ զիտէ, որ դէպի բարենորոգու-
թիւնները անսպասելի հակումը, որ հասարա-

կութեան ղեկավար տարրերը յանկարծ ցոյց կը տան՝ ծայրէ ծայր ոչ այլ ինչ է, եթէ ոչ թակարդ, կարթ, որի ծայրին տխմարներին ամրացնում են, որպէս զի նրանց հաշտեցնեն ներկայ կարգերի հետ և դիմադիր շարքերը ջլատեն: Նման մարզարիւնի (իւղ) «բարենորոգչականութեանը», որ սովորաբար վերևից է գալիս և նպատակ է ունենում սանձել ներքևից եկող բարենորոգչական հարագատ, զսպած կամ արդէն դուրս պոռթկած աշխատանքը՝ պրօզրէսի համար շատ անգամ չարաբախտ ու վտանգաւոր ընկալիցիայից աւելի ահաւոր: Այդպիսի «բարենորոգչականութիւնը» աւելի կատաղի թշնամի չունի, քան յեղափոխականները: Եւ այդ կէտում ևս, նրանց և չափաւոր ազատամիտների մէջ չի կարող մի շարք խռովութիւններ չծագել:

Սրանք և նրանք միանգամայն տարբեր են վերաբերում հրճուող ընկալիցիայի բռնկումներին: Յեղափոխականի համար դա՛ մի երևոյթ է, որ տեղի ունի քաղաքական կեանքի մակերևոյթի վրայ, ուստի և անընդունակ է միշտ անդրադարձնել բոլորն, ինչ կատարւում է այդ կեանքի խորերում: Բէակցիան, օրինակ, կարող է ջղաձգական, յուսահտուր ցնցումն լինել մի տէրութեան, որ զգում է թէ իր օրերը հաշւած են, որ գլուխը կորցրել է և իր անսանձ վայրագութեամբ, իր սեփական վախճանն է արագացնում միայն: Այդ դէպքում ևս, յեղափոխականն աւելի

հեռուն դիտելով նոյնքան հերոս ու խիզախ, թեւաւոր՝ նոյնքան աւելի ըմբոստ յոյսերով, կուի կրակն է նետուում, որքան սանձարձակ ու անզուսպ է ընկալիցիայի կամայականութիւնը: Իսկ բարենորոգչականի համար, դժբախտաբար, արտաքին քաղաքական շարժումը կանգնեցնում է այն գաղտնի զսպանակները, որոնք առաջացնում են այդ շարժումը, ուստի և նա մաքուր սրտով ամեն «չնչին զիջում» ողջունելով, ոչ մի բանի առաջ այնպէս չի դողում, որպէս ընկալիցիայի տիրապետելու հեռանկարի առաջ: Ահա ինչու մեր մեծ երգիծաբանը լիբերալի էփօլիցիաները հետևեալ համառօտ ձևերով նկարագրելով՝ նախ «հնարաւորութեան չափով», յետոյ «գոնէ մի բան» և՛ վերջապէս, «ստորութեան հաշտելով» — բոլոր ժամանակների ու բոլոր ազգերի «չափաւորների» Աքիլլէսեան գորշապարն էր մտրակում:

Երկրի քաղաքական զարգացման արտաքին շարժումը յեղափոխականը դիտում է, որպէս փաստացի յարաբերութեանց գործառնութիւն այն ոյժերի, որ գոյութիւն ունեն այդ հասարակութեան մէջ, ժողովրդական ոյժի չափը ընդունելով գործօնների մի ամբողջ շարք, այն է նրա թւական քանակը, գիտակցութիւնը և, վերջապէս, կազմակերպչականութիւնը: Ժողովրդական հասունութեան ոյժին ուղիղ յարաբերական աճում է և տիրող կարգերի հակումը հաշի առնելու նրա շահերը: Ուստի կարելի կլինէր ասել, որ

կութեան ղեկավար տարբերը յանկարծ ցոյց կը տան՝ ծայրէ ծայր ոչ ալ ինչ է, եթէ ոչ թակարդ, կարթ, որի ծայրին տխմարներին ամրացնում են, որպէս զի նրանց հաշտեցնեն ներկայ կտրգերի հետ և դիմադիր շարքերը ջլատեն: Նման մարգարինի (իւղ) «բարենորոգչականութեանը», որ սովորաբար վերևից է գալիս և նպատակ է ունենում սանձել ներքևից եկող բարենորոգչական հարագատ, զսպած կամ արդէն դուրս պոռթկած աշխատանքը՝ պրօզդէսի համար շատ անգամ չարաբախտ ու վտանգաւոր ըէակցիայից աւելի ահաւոր: Այդպիսի «բարենորոգչականութիւնը» աւելի կատաղի թշնամի չունի, քան յեղափոխականները: Եւ այդ կէտում ևս, նրանց և չափաւոր ազատամիտների մէջ չի կարող մի շարք խռովութիւններ չծագել:

Սրանք և նրանք միանգամայն տարբեր են վերաբերում հրճուող ըէակցիայի բռնկումներին: Յեղափոխականի համար դա՛ մի երևոյթ է, որ տեղի ունի քաղաքական կեանքի մակերևոյթի վրայ, ուստի և անընդունակ է միշտ անդրադարձնել բոլորն, ինչ կատարւում է այդ կեանքի խորքերում: Բէակցիան, օրինակ, կարող է ջղաձգական, չուսակտուր ցնցումն լինել մի տէրութեան, որ զգում է թէ իր օրերը հաշւած են, որ գլուխը կորցրել է և իր անսանձ վայրագութեամբ, իր սեփական վախճանն է արագացնում միայն: Այդ դէպքում ևս, յեղափոխականն աւելի

հեռուն դիտելով նոյնքան հերոս ու խիզախ, թեւաւոր՝ նոյնքան աւելի ըմբոստ յոյսերով, կուրկրակն է նետւում, որքան սանձարձակ ու անզուսպ է ըէակցիայի կամայականութիւնը: Իսկ բարենորոգչականի համար, դժբախտաբար, արտաքին քաղաքական շարժումը կանգնեցնում է այն գաղտնի զսպանակները, որոնք առաջացնում են այդ շարժումը, ուստի և նա մաքուր սրտով ամեն «չնչին զիջում» ողջունելով, ոչ մի բանի առաջ այնպէս չի դողում, որպէս ըէակցիայի տիրապետելու հեռանկարի առաջ: Ահա ինչու մեր մեծ երզիծաբանը լիքերայի էփօլիւցիաները հետևեալ համառօտ ձևերով նկարագրելով՝ նախ «հնարաւորութեան չափով», յետոյ «գոնէ մի բան» և՛ վերջապէս, «ստորութեան հաշուելով» — բոլոր ժամանակների ու բոլոր ազգերի «չափաւորների» Աքիլլէսեան գարշապարն էր մտրակում:

Երկրի քաղաքական զարգացման արտաքին շարժումը յեղափոխականը դիտում է, որպէս փաստացի յարաբերութեանց գործառնութիւն այն ոյժերի, որ գոյութիւն ունեն այդ հասարակութեան մէջ, ժողովրդական ոյժի չափը ընդունելով գործօնների մի ամբողջ շարք, այն է նրա թւական քանակը, գիտակցութիւնը և, վերջապէս, կազմակերպչականութիւնը: Ժողովրդական հասունութեան ոյժին ուղիղ յարաբերական աճում է և տիրող կարգերի հակումը հաշւի առնելու նրա շահերը: Ուստի կարելի կլինէր ասել, որ

քաղաքական կազմը և նրա շրջանակներում գործադրող «ներքին քաղաքականութիւնը» ուղիղ արտացոլումներ են հասունութեան այդ «փաստացի յարաբերութիւնների» (Լասսալի արտայայտութիւնը), նկատի ունենալով միայն այն արդարացումը, թէ գահի կողքին երբ յայտնի ժողովրդական կազմակերպութիւն կայ, այդ արդէն հաստատում է նրա ոյժը: Պետական կառավարչական կազմը ինքնօրինակ մի մեխանիզմ է, որ ամեն այլ մեխանիզմների ու մեքենաների նման, իրեն կցած նախնական, կենդանի ոյժը մի քանի անգամ աւելցնելու յատկութիւնն ունի: Յեղափոխականի նպատակն է—այդ կազմակերպւած ոյժին, որ վերևից է գործում, ստեղծել ընդդիմադիր մի ուրիշ կազմակերպւած ոյժ, որ ներքևից գործի: Այդ ոյժի առաջին քայլերը, բնական է, զօրեղ ըէակցիա են առաջացնում, որ ճիգ է թափում «չարիքն իր բնում խեղդել»: Տիրապետող տարրերը ձգտում են, պարզ է, պետական մեքենան ամբողջովին բռնութիւնների գործիք դարձնել, մի ոսկումական մեխանիզմ, «յեղափոխութեան ճիւղի» բարձրացրած գլուխը շխջախելու: Եւ այդտեղ, ի հարկէ, լիբերալները բոլոր պաշտելի սկզբունքները, ինչպէս օրինակ իշխանութեան բաժանումը, դատաստանական իշխանութեան անկախութիւնը կառավարչականից, օրէնսդրականը կատարողականից և լիբերալների դաւանանքի այլ կէտերը անխնայ

ոտնահարում են: Ու լիբերալները նստում են Բաբելոնի գետերի մօտ, հեծում են ու կոծում, պատում են իրենց հանդերձները, մոխիր ցանում գլխներին և յեղափոխականների վրա գանգատում, որ իրենց «անտակտ» յարձակումներով ըէակցիա առաջացրին... Կրակին իւր չաւելցնելու համար, նրանք իրենք, ի հարկէ, իրենց ու արբանեակներին խորհուրդ են տալիս «խոտի բարակ ծիլից էլ ցած խոնարհել գլուխները», որպէսզի ում հարկաւոր է համոզեն, թէ իրենց քաղաքական «որբուկներին» կարիք չկայ ոչինչ խտութիւնների ենթարկելու—ընդհակառակը, նրանց առաջ է, որ ազատ ասպարէզ պիտի բանալ քաղաքակրթութիւնը խաղաղ ու աստիճանաբար զարգացնելու համար...

Բայց և այնպէս դէպքերն աճում են ու զօրանում: Հասարակական առողջ շարժումը երկար ճնշել անկարելի է: Երբեմն նա յաղթում է, սակայն որպէս Ֆէնիքսը, նորից վերածնւում է իր սեփական մոխրից: Ըէակցիան մի անգամ չէ նրան հող ու մոխիր դարձնում, բայց նա, պառասպելական հսկայի նման մայր հողի շփումից նոր ոյժեր է հաւաքում—թափանցում է շարունակ աւելի խորը, ու հետզհետէ հասարակութեան աւելի լայն ու ցածր խաւերին տիրանում և յաղթութեան հասուն շանսերով նորից է սկսում կռիւր: Վերջապէս մօտենում է մի ըոպէ, երբ ըէակցիայի ոյժն այնքան է թու-

լանում, որ նրա դողացող ձեռքերից պետութեան դեկն սկսում է ընկնել կամաց-կամաց: Բայց և հակառակորդ լեզվափոխական ոյժը անաւոր կուում երկար արիւն թափելուց յետոյ, այնքան ուժեղ չէ, որ թուլացած թշնամու տեղը բռնի: Հասարակութիւնը դէպի առաջ մղող ու իր տեղը պահող հաւասար ներգործող ոյժը ձօնում է արանքում...: Նէնց այդտեղ էլ սովորաբար նորից չարութիւն են առնում, գլուխ բարձրացնում «չափաւորները»: Այդտեղ էլ այժմ կայանում է նրանց ոյժը, որ նրանք խիստ ու որոշակի—գծագրած ոյժ չունեն, որպէս ըէակցիայինն ու լեզվափոխութեանն է: Կուի անորոշ վախճանը իշխանութեան է հասցնում անորոշ, օպպօրտունիստ, միջանկեալ կուսակցութիւններին: Եւ անա չափաւորութեան ու ճշտապահութեան մեր ասպետները հանդիսաւոր շքով ասպարէզ են գալիս, որ պրօգրէսի «կէտը» մի փըշրանք դէպի ձախ տանեն. դուրս են գալիս յաճախ «ոչ լեզվափոխութիւն, ոչ ըէակցիա» խորխտ նշանաբանը բերաններին, գալիս են յոխորտալով իրենց զրական և պետական աշխատանքի «ընդունակութեամբ», «լու բացասողի ու կործանողի դերում, առաքեալներին» ի կատարողութիւն. դուրս են գալիս, անգամ չգիտակցելով, թէ իրենց վիճակած է միայն հաշել, քաղաքական կեանքի մակերևոյթին ցօլացնել միայն այն խոր փոփոխութիւնները, որ «ոյժի գործնական բաղ-

խումների մէջ» առաջացրել է լեզվափոխական կուսակցութիւնը...

Իրանից, սակայն, չի հետևում երբէք, թէ բարենորոգչականները միշտ և անխուսափելի թշնամի են լեզվափոխականներին: Ընդհակառակը: Նրանք միայն յաճախ երևակայում են թէ իրար թշնամի են: Իրօք, իրենք այդ չգիտակցելով, լեզվափոխական տարրերի ոյժն են մեծացնում, պատանխանատու ու ազդեցիկ դերեր ստանձնելով, լեզվափոխութեան և ըէակցիայի ոյժերի փոխադարձ իրաւասութեան սահմանը որոշելով. և յետոյ (գուցէ, իրենք այդ չկամենալով) նրանք լեզվափոխականների յետագայ աշխատանքը թեթեւացնում են, իրականացնելով իրենց թէկուզ համեստ բարենորոգչութիւնները, ըէակցիայի գոռոգ ամբողջների պատերը բարենորոգչական անմեղ կերակուր պատրաստելու խաղաղ խոհանոցների փոխելով, վերջապէս, ոյժի ներածին չափ շարժելով ընդհանուր «քաղաքակրթութիւնը»: Ուստի և ժամանակաւոր միութիւնները, լեզվափոխականների և բարենորոգչականների ոյժերի ժամանակաւոր համակերպումը յարմար ըոպէին ու յարմար ձևերով, կարող են շատ հնարաւոր ցանկալի լինել: Այստեղից պարզ է միայն, որ, նախ, ցնորք է ընդունել նրանց—թէկուզ Նէնց ժամանակաւոր—ձուլումը, որ, երկրորդ, մինչև անգամ յանուն ընդհանուր նպատակի և ջանքերի, հասարակ իրաւարարութեան համար, որպէս ինք-

նուրոջն ու կազմ քաղաքական միութիւնների՝ ստիպւած պէտք է շատ խոչընդոտները յաղթել, որոնք զլրաստորապէս մեր քաղաքական տհասութեան ընդհանուր երևոյթի մէջ են արմատացած: Լիբերալներն ու չափաւորները պարտաւոր են ընդունելու, թէ յեղափոխականները նրանց սիրալիր հայեացքների փոխարէն հրաժարւել չեն կարող ոչ սօցիալիզմից, ոչ իրենց խոր—յեղադափոխական գործելակերպից, որովհետև դրա և նրա մէջ ոչ միայն յեղափոխականների ոյժի գրաւականն է, այլ յաճախ և գրաւականը բարենորոգչականների արագ յաղթանակի: Եւ, իրենց սեփական կերպարանքում, բարենորոգչականները քանի դեռ չեն աղձատել իրենց ծրագիրը ու այդպիսով պահպանողականների չեն փոխւել, պարտաւոր են օգնութիւն ցոյց տալ սօցիալիզմին և յեղափոխութեանը, քանի որ նրանց հասունութեան պտուղներով ամենից առաջ, յիշւած միջանկեալ շրջանում, ամենայն հաւանականութեամբ, նրանք է, որ օգտուում են: Իսկ սօցիալիստ-յեղափոխականները, ի հարկէ, ձգտում են, որ իրենց ձայնն էլ հաշւի առնւի ներկայի հասարակական վերակազմութեան գործում: Սակայն այդ բոլորը նախնական քայլեր են լոկ, նրանց համար, աւելի լուսաւոր ու սքանչելի ապագայի հասնելու առաջին աստիճանները:

Ուրեմն, սօցիալ-յեղափոխական կուսակցութեան զաղափարական և գործնական մօմէնտը, վերջնական և մերձաւոր նպատակները, ոչ միայն իրար թշնամանալ անկարող են, այլ ընդհակառակը՝ իրար լրացնում, լուսաբանում ու հիմնաւորում են: Առանց գործնական, կենսական ծրագրի սօցիալիզմը կաբինէտային մտածողի ցնորք կլինէր, իդեալիստ երեւակայողի երազանք, մոլեռանդ-աղանդաւորի հաւատալիք: Առանց որոշ ու պարզ վերջնական նպատակի, առանց հասարակական իդեալի, յեղափոխական ազատամարտը կլինէր մարմին՝ առանց կենդանարար հոգու, նաև՝ առանց դեկավարի, առանց կոմպոսի վարանումն լաբիւրինթոսում, առանց ուղեցոյց աստղ, որոշ նախագիծ ունենալու:

Սակայն յեղափոխական կուսակցութիւնը ոչ միայն անհրաժեշտ է բացի սկզբունքայինից ունենալ և պահանջների մինիմալ-ծրագիր. բարենորոգչական կուսակցութիւններից զանազանւելու համար անհրաժեշտ է, որ նրա մինիմալ-ծրագիրը մանր պահանջների հասարակ մեքենական գումար, սօցիալական մասնակի թափթփուկներ չներկայացնէ. նրա գործելակերպի համար անհրաժեշտ է, որ նա մանր կուրի շմտնի փշրանքներով բարելաւումներ ձեռք բերելու համար, այլ իւրաքանչիւր բոլոր իր առաջ ունենայ մի խոշոր, բարձր խնդիր, որի հանդէս բերելը ցոյց տայ, թէ կուսակցութիւնը դէպքերի գեղեցկա-

գլխակում կարողացել է գտնել պատմութեան գըլ-
խաւոր զարկերակը: Մի կուսակցութիւն, որ ցան-
կանում է կենդանի և գործունեայ պատմական
ոյժ լինել, որ կամենում է հասարակական տրա-
մադրութեան ու քաղաքական կեանքի ընդհա-
նուր հոսանքում ճգնաժամ առաջացնել՝—մի այդ-
պիսի կուսակցութիւն անպայման պարտաւոր է
ամեն ըոպէ որևէ մի հիմնական ռազմական նշա-
նաբան ունենալ, որ հարազատութեամբ ժամա-
նակակից իրականութեան ամենագոյուն լարն
արձագանգէր: Սրւան չարիքը կազմող նրա մեր-
ձաւոր պահանջների ծրագրի մէջ պէտք է այն-
պիսի կէտ լինի, որի շուրջը, որպէս բնական
կէտորոնի շուրջը, համախմբւել կարողանային
նրա մնացած բոլոր մասնաւոր խնդիրները: Այլ
կերպ կուսակցութեան մերձաւոր ձգտումները
մանր ու անկապ փշրանքների կբաժանւեն, և
միութեան այդ պակասութիւնը նախ և առաջ
կանդրադառնայ նրա վրա, որ հասարակական կար-
ծիքը անկարող կլինի ցանկալի չափով բեռել
իր գործունէութեան վրա. յաղթական կերպով
իր վրայ ուշադրութիւն գրաւել կարող է միայն
այն կուսակցութիւնը, որ իւրաքանչիւր յարմար
ըոպէ, որոշակի, պարզ ու աւարտած մի ամ-
բողջութիւն է հանդիսանում: Ուրեմն ամեն յար-
մար ըոպէ կուսակցութեան առաջ պէտք է ցցւի
որևէ պատկանելի հերթական խնդիր, որի վրա
նա համարձակ կարողանայ իր ոյժերը կենտրո-

նացնել, բոլոր իր հարւածները մի կէտի ուղղե-
լով: Դրա մէջ է—ոյժի ամենաանհրաժեշտ պայ-
մաններից մէկը, յաջողութեան ու գէպքերի ըն-
թացքի վրա ներգործելու գեղեցիկ գրաւականը!

Պարզ է այստեղից, որ եթէ մի պահանջ,
կուսակցութեան վարքի տակտիկայի ուղղու-
թեամբ բռնում է կենտրոնական տեղը, այդ եր-
բէք չի նշանակում, թէ նա պիտի յետ մղէ, կամ
բոլորովին դուրս վանէ միւս պահանջները: Չի
նշանակում դա, թէ մինչև այդ առաջնակարգ ու
հերթական պահանջի իրագործումը՝ միւս պա-
հանջները չպէտք է հնչեցնել. ոչ, դա միայն
նշանակում է, թէ այս պահանջով հարկաւոր է
ի մի շողկապել և ուրոյն լուսաբանութիւն տալ
minimal-ծրագրի մնացած բոլոր membra disjecta:

Պարզենք այս որպէս չափաւոր, նոյնպէս և
ծայրայեղ կուսակցութիւնների քաղաքական
կեանքի օրինակներով: Ենթադրենք, թէ մի երկ-
րում կուսակցութիւնը պրօգրէսսի ամենավտան-
գաւոր թշնամի այս ինչ մօմենտին համարում է,
ասենք, թէկուզ հէնց կղերականութիւնը: (Cle-
ricalisme—voilà l'ennemi! ինչպէս մի ժամա-
նակ բացականչում էր Գամբետտան): Ուրիշ
հարց է, թէ այդ երկրում և պատմական այդ
մօմենտին որքան տեղին է առաջ մղում այդ
նշանաբանը, գլխաւորապէս բոլոր ճիգերը նրա-
նում կենտրոնացնելու համար: Ինչ էլ լինի, այդ
խնդիրը ևս կարող է համեմատաբար խնդիրներ

լայն շրջան ընդգրկել: Կուսակցութիւնը, որ այդ բոլորներն իր գլխաւոր թշնամին համարում է կղերականութիւնը, ի հարկէ, իր գլխաւոր ուշադրութիւնը պիտի դարձնէ այդ թշնամուն վճռական հարւածը հասցնելու: Սակայն արդեօք այդ նշանակում է, թէ նա պարտաւոր է աստուածաբանութեան ու եկեղեցական դաւանաբանութեան միակողմանի քննադատութեամբ զբաղելու, այդ յարգելի աշխատանքի մէջ մոռանալով իր պահանջները ժողովրդական կրթութեան, առողջապահութեան, հասարակական խնամատարութեան, մասսաների բարօրութեան և այլն ասպարէզներում: Բոլորովին ոչ: Նա միայն պարտաւոր է այսպէս թէ այնպէս այդ բոլոր պահանջները կապակցել մօմենտի իր կենտրոնական խնդրի հետ: Բոլոր ասպարէզներում նա միանգամից կուրծարծելով և հասարակական այլ և այլ տարրերը շահագրգռելով: Մանկավարժին նա ցոյց կտայ հոգևորականութեան վնասակար ազդեցութիւնը ժողովրդական կրթութեան գործում, աշխարհի դպրոցների գերազանցութիւնը մատնանշելով ի դիմաց հոգևոր խնամակալութեան յանձնաւածների: Երկրորդ մտքի ու քննական ոգու դէմ. գեղարուեստասիրին—չոր ու մեռցնող ճգնութիւնը, որ կեանքից նրա բոլոր հրաշալիքները խլում է. մարդասիրին—դաւանական ու ցեղական ատե-

լութեան բորբոքումը մոլեռանդ հոգևորականների կողմից. բանւորին—եկեղեցու հովիւների մշտական յորդորանքը բոլոր շահատակութիւններին ու բոլոր հալածանքներին. բժշկին—մոլեռանդութեան վնասակար ազդեցութիւնը, որ բժշկութեան վրայ նայում է, որպէս Աստուծոյ կամքը խախտող մի ոյժի. կամք, որ ջոկում է հիւանդութիւնները և բժշկում նոյնպէս. բարերարին և հասարակական բարօրութեան նախանձախնդրին—այն շահագործիչ արարքները, որ նամօթաբար կատարում են կրօնական միաբանները «աստուածահաճոյ» հիմնարկութիւններում առանց որևէ վերահսկողի. հասարակ ժողովրդին ցածր հոգևորականութեան ծէսերի համար շահախնդիր, կողոպտիչ ու նման այլ յատկութիւններ երևան բերելը,—և այլն և այլն: Մի խօսքով, կեանքի բոլոր ասպարէզներում նա կարող է մի այնպիսի կեռ գտնել, որը կարելի լինէր գործադրել կղերականութեան դէմ թշնամանանք յարուցանելու համար:

Ճիշտ այդպէս մի այլ երկրում քաղաքական փթած սեփմի, աբսոլյուտիզմի դէմ կռիւը կարելի է առաջ տանել նոյնպիսի նշանաբանով: Այդտեղ խնդիրն աւելի ընդարձակ կլինի, բանի որ այդ վերջինի ազդեցութեան շրջանն աւելի լայն է ու խորը: «Բիւրոկրատիայի» ինքնակալութեան ոչնչացման պահանջը, իբրև հիմնական խնդիր, ինքնըստինքեան, բնական է, պիտի կա-

պակցէ ի մի, գոյն ու երանգ պիտի տայ բոլոր մանր ազատական պահանջներին: Այդպէս, թէ-կող հէնց, օրինակի համար, այն սովորական պահանջները, որ յայտարարուած է գործարանական բանւորների «տնտեսական կռւի» մէջ մի հիմնական խնդրի ձգտելով, հետզհետէ բոլորովին կկորցնեն ամեն ինքնամղիչ բնաւորութիւն և ստորագրեալ բնաւորութիւն կընդունեն:

Զարմանալի չէ, որ ծոյլ «էկօնօմիզմի» շրջանից յետոյ և քաղաքական խնդիրների անվախ յայտարարելուց յետոյ, ուսու սօցիալդեմոկրատիան, հոգեբանական ընկալելի օրէնքով, ընկալ միւս ծարայեղութեան մէջ և շտապեց փայտը հակառակ կողմը դարձնել: Նա քաղաքական ազատութեան կոիւր ոչ միայն իրեն կենտրոնական նշանաբան է ընտրել (գոնէ տեսակետում), այլ և դրան ծայրայեղ բացառիկ տեղ է տւել: Նա իբր անվիճելի ճշմարտութիւն ընդունել է, թէ ուսու յեղափոխութիւնը միմիայն գուտ բուրժուազական պիտի լինի, այսինքն երկրի իրաւական սիստեմը միայն հնարաւորութիւն կլինի փոխելու, նրա սօցիալ-տնտեսական կազմի խորքը չգնալով:

Մենք նշոյլ անգամ չենք ցանկանում քաղաքական ազատութեան նշանակութիւնը փոքրացնել: Ուստի և սօցիալդեմոկրատիայի համար է— կօնօմիզմից քաղաքականութեան անցնելը ան-

պայման պրօգրէսս էր, ծրագրի ընդլայնում: Դա գործելակերպի մի կարևոր քայլ էր դէպի առաջ:

Հերթական խնդիրները բոլորովին պարզ ցուցադրելով միայն սօցիալիստական կուսակցութիւնը կարող է բոլոր դիմադիր և ազատամիտ ոյժերի հոգին դառնալ, հասարակական լարումի ու կռւի շրջանում նրանց գլուխ կանգնել: Դրա համար նա չպէտք է բացառապէս իր առանձին, ինքնուրոյն կուսակցական խնդիրներում փակւի, որ նրան միւս կուսակցութիւններից զանազանում է: Ընդհակառակը: Նրա միւսնիմում — ծրագիրը պէտք է բաւականաչափ լայն լինի, որպէսզի աւելի յանդուգն տիրանայ և հետևողաբար արտայայտի ազատամիտ—ընդդիմադիր կաշկանդումներն ևս: Դրանով հէնց նա աւամայ պիտի շահի այդ ոչ բոլորովին իրեն համախոհ, սակայն ընդդիմադիր խմբակցութիւնների համակարանը, այն խմբակցութիւնների, որոնք յայտնի կէտերում նրա հետ հաշտուում են: Նրանք կսովորեն նրան ոչ միայն իրենց դաշնակիցը համարել, այլ և իրենց առաջապահ գունդը — ու հէնց այդպիսով, բոլոր ամենաբոստ, կենդանի ու վճռական խմբակցութիւնների գաղափարական լաւագոյն տարրերը նրա դեկավարութեամբ հետզհետէ ձախակողմը կթեքեն, մինչև վերջնականապէս սօցիալիզմի կարմիր դրօշակի տակ մտնեն: Այդպէս, Յրանսիայում սօցիալիզմին դարձել են այնպիսի մարդիկ, ինչ-

պէս ժօրէսը, Վիվիանին, Պրէսսանսէն, Անատօլ Ֆրանսը. Գերմանիայում—Հէյնէն, Լեդեբուրը, Հերէն, Բէլգիայում—Ֆիւրնեմոնը, Գրիմարը, Լաֆոնթէնը, Բրիւնէն և ուրիշները. Իտալիայում Լաբրիօլան, Դէ-Ամիչիսը, Գաբրիէլ դ'Աննունցիօն:

Ուրեմն, անտարակոյս է, որ մի կուսակցութիւն, եթէ ուզում է կենսական լինել, պարտաւոր է իր ծրագրի մէջ միացնել սկզբունքային լայն ըմբռնումն ժամանակի ամենացաւոտ, հասուն ու հերթական հարցերի, մերձաւոր ծրագրի համապատասխանութեամբ: Կարիք կայ ասելու, որ այդպիսի հարցերից մէկը ներկայանում է Ռուսաստանի քաղաքական ազատագրութեան հարցը: Անյադ, հոգու բոլոր մասնիկներով այդ ազատագրումը ցանկանալու համար հարկաւոր չէ անպատճառ սօցիալիստ լինել: Լիբերալ—հողատէրը, ինքն իրեն յարգող պրօֆեսսօրը, ուսանողը, համեստ ուսուցիչը, պարզապէս կրթուած, լուսաւորւած, ազատամիտ մարդը, կէս-գրագէտ աղանդաւորը, իրեն մարդկային արժանիքն իմացող ստորին քաղաքացին, գիւղացին, բանւորը—ամենքն իրենց վրա զգում են կամայականութեան ծանրութիւնը, բոլորն ուզում են աւելի ազատ շնչել, ամենքն ուզում են աւելի ազատ մարդ լինել: Անգամ այն արտօնեալ դասերի անդամները, որոնց շահերը այնպէս սրտացաւ պաշտպանում է ինքնակալութիւնը, միշտ չեն կարող

տէրութեան շատ անգամ ասիական-նահապետական անտանելի հոգատարութեանը դիմանալ ու կուող հմայիչ շարքերի առաջ միշտ անտարբեր մնալ...: Իսկ ներկայ Ռուսաստանի կուլի չափազանց դժւարին պայմաններում սօցիալ-յեղափոխական կուսակցութիւնը իր գործի փառաւոր վախճանի համար անչափ կարիք ունի դժգոհութեան, բողոքի, ընդդիմադրութեան ու յեղափոխութեան աշխատաւորների համակրանքի ընդհանուր միջնորդութիւն...: Այդ միջնորդան այն օդն է, որ անհրաժեշտ է սօցիալ-յեղափոխական կուսակցութեանը, որ նա շնչի, որ ապրի, որ գործի...: Սակայն ինչո՞վ կարելի է ստեղծել այդ, համարեա ընդհանուր, համակրանքի մըթնոլորտը, եթէ ոչ երկրի ամենատարբեր դժգոհ տարրերի ընդհանուր պահանջներին բաւարարութիւն տալու համար եռանդու կուլի մըղելով:

Իբրև իր գործելակերպի կենտրոնական կէտ՝ քաղաքական ազատագրութեան պահանջը առաջին անգամ հրապարակ հանելու պատիւը պատկանում է ժողովրդի կամքին, և նրանից յետոյ յեղափոխիչ միտքը, դժբաղդաբար, մի անգամ չէ յետադիմութիւն ցոյց տւել այդ կէտում: Անուամենայնիւ, այդ ժամանակից ի վեր հին ժողովրդականների «անքաղաքականութիւնը» մահացու հարւած ստացաւ: Եւ աւելի քիչ, բան

երբ և է, նրա յարութիւնը ներկայ ժամանակ հաւանական է:

Եթէ երբևիցէ ազգերի կեանքում այնպիսի բոպէսներ են լինում, երբ զգայուն պահանջը ցաւագինօրէն առաջին տեղն է բռնում, ինչ գնով էլ լինի, պահանջելով անյապաղ իր լուծումը՝ այդպիսի մի բոպէ այժմ ապրում է մեր բազմաշարշար Ռուսաստանը: Բիւրոկրատիայի ինքնակալութիւնից կամ ինքնակալ բիւրոկրատիայից մեռցնող ու սառցային շնչառութիւնից ազատազրոււմը նրա համար—ոչ միայն առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի խնդիր է, այլ և աւելին, կեանքի և մահու խնդիր է, առողջ զարգացման կամ հիւանդագին տանջող հոգեվարքի խնդիր... Յանուն սօցիալիստական իդեալի, լսնուն բոլոր մեր լաւագոյն և վեհ բաղձանքների, մենք պարտաւոր ենք մեր բոլոր մտաւոր պայքարող պահանջները անբաժան շողկապել այդ «կենսական խնդրի» հետ: Ուր և ինչից էլ սկսենք պայքարը, բոլոր ճանապարհները մեզ հռովմ պիտի տանեն, և մեր բոլոր պահանջները տրամաբանօրէն պէտք է վերջանան միեւնոյն յանգով. *Caeterum censeo, Qarthaginem delendam esse!* կործանենք ուրեմն բիւրոկրատիայի Քաղկեդոնը:

Սակայն դրա հետ տրամաբանական ոչինչ կապ չունի, թէ մտապայ յեղափոխութիւնը ան-

հրաժեշտ է սոսկ քաղաքական յայտարարել և բացառապէս բուրժուական թողնել: Մեր ժամանակակից պետական կազմը հէնց չափազանց սերտ և անխոզելի կապած է տիրող դասերի ամենապարագիտ տարրերի հետ, որ կարելի լինէր քաղաքական ազատամարտը բաժանել տնտեսական ազատազրութեան կուրից: Առաջինն, ի հարկէ, հանդիսանում է երկրորդի տրամաբանական պայմանը, տրամաբանական նախաբանը: Սակայն հարկաւոր է աւելի խոր քննել այդ դրութիւնը, ամենակոպիտ թիւրիմացութեան մէջ չընկնելու համար: Մօքքը քաղաքական փոփոխութիւնների տրամաբանական և ոչ պատմական նախորդութեան մասին է, սօցիալական-տնտեսականից: Պատմականօրէն նրանք կարող են և պարտաւոր են ձուլւած գնալ առաջ, շարժել միշտ անանջատ: Իսկ տրամաբանօրէն, ժողովրդի ձեռքով ստեղծած սօցիալական-տնտեսական փոփոխութիւնը հնացած քաղաքական ձևերի ձգնաժամն է յայտարարում, նրան մահացու հարւած հասցնելը: Այստեղից քաղաքական ազատամարտը հանդիսանում է շարժման անհրաժեշտ ձևը, որպիսի սօցիալական-տնտեսական պահանջների մէջ էլ բաղկանալիս լինի նրա մերձաւոր պատմական բովանդակութիւնը: Չեի և պարունակութեան անբաժանելիութիւնը—ահա այն լուրջ սկզբունքը, որ ուղիղ հասկացւելով, կպահպանի և միակողմա-

նի անքաղաքականութիւնից և ոչ պակաս միակողմանի քաղաքականութիւնից: Եւ, մենք, որ հեռու ենք թէ մէկից և թէ միւսից, տնտեսական ճգնաժամի, որ ապրում է Ռուսաստանը, և քաղաքական ճգնաժամի մէջ եղած խորին կապը հասկանալով, արմատական միջոցներով ցանկանում ենք նրան դուրս բերել այն տնտեսական կաթաճահար վիճակից, որով նրա արդիւնաբերող ոյժերը կաշկանդուել են: Գիւղի աղքատանալու մէջ մենք բոլոր տնտեսական բռնութիւնների բանալին ենք տեսնում, ուստի և հողային բարենորոգութիւնը՝ հողի համայնացումը, տնտեսական ազատագրութեան իբր առաջին քայլ—մեզ համար միանում է քաղաքական բարենորոգութեան հետ միասին միակ բացազանչութեամբ — «Հող և Ազատութիւն»:

Որևէ թիւրիմացութիւնից խոյս տալու համար, թերևս, մի բացատրութիւն ևս անհրաժեշտ է: Վերն ասածից չի կարելի եզրակացնել—ինչպէս այդ, դժբախտաբար, անում են,—թէ քաղաքական ազատութիւնը պէտք է լուկ մի միջոց ճանաչելի, որ վերջ ի վերջոյ աշխատաւոր դասակարգերի ազատագրութեանն է տանում: Այս վերջին նպատակը որքան էլ բարձր է, այնուամենայնիւ քաղաքական ազատութիւնը—չափազանց է խոշոր և հսկայ, որ կարելի լինէր նրան ցածրացնել մի ուրիշ բանի բացառապէս միջոցի աստիճանին: Ոչ, քաղաքական ազատութիւ-

նը միջոց չէ միայն՝ իբր այդպիսին, նա իր ինքնուրոյն նպատակն ունի. նա—ինքն իրենով մի բարիք է, և հետեւապէս, կարող է և պարտաւոր է ոչ միայն շողկապող մի անշունչ օղակ լինել, այլ և լարւած տենչերի ու ճիգերի մի կենդանի նպատակ: Մեր հասարակական իդեալի մէջ հաւասարապէս տեղ ունեն քաղաքական ազատութեան հասկացողութիւնը և արդիւնաբերութեան սօցիալիստական կարգաւորման հասկացողութիւնը: Նա ինքն այդ իդեալի մի մասն է. մասը, որ, ինչպէս և ուրիշ մի քանի մասեր, կեանքում իրականանալ կարող է մնացած մասերից աւելի շուտ, մեծ կամ փոքր ծաւալով, և իր իրականանալով միւսների իրականացումն էլ արագացնել: Ահա ինչու մենք, մեր կենսական խնդիրներից մէկը քաղաքական ազատութեան նւաճումն ենք ընդունում—յանուն հէնց իր ու յանուն ընդհանուր սօցիալիստական բարձր գաղափարի: Ինչու ահա մենք նպատակ ենք դնում—Մահմանադիր ժողով հրաւիրելը, որ պիտի գալ ժամանակակից բոլոր կարգերը յօգուտ աշխատաւոր ժողովրդի վերակազմէ:



Յովհաննէս Դավթեանի հրատարակութեամբ

լոյս են տեսել՝

1. Մ. Գորկի, Մահար Չուզրա, [Թարգմ. Ս. Բարիեան. «սպառւած» . . . — 10
2. Ս. Բարիեան, բանաստեղծութիւններ — 20
3. Լ. Անդրէև, Անդունդը, [Թարգմ. Ս. Բարիեան — 10
4. В. Папазянъ, Луръ-да-Луръ. Нагой Дервишъ. [Թարգմ. հայերէնից Վ. և Ս. Բարիեաններ — 12
5. Գիււի դը Մօպսան. Մի կեանք, վէպ Լև Տօլստօյի լառաշարանով և հեղինակի պատկերով, [Թարգմ. Ս. Տէր-Անանեան. 1 —
6. А. Агаронянъ, Разказы: Кусочекъ хлѣбца, Пѣтухъ, [Թարգմ. հայերէնից, Վ. Բարիեան — 10
7. Ա. Աննենկայա, հանրապետութիւն, [Թարգմ. Ս. Տէր-Անանեան — 5
8. Ա. Բերել, «Քրիստոնէութիւնը և Սօցիալիզմը «Կրօնական բանականութիւն Գիւլֆէ ականի Գօգօֆ քահանայի և Ա. Բերելի մէջ» [Թարգմ. Ս. Տէր-Անանեան — 10
9. Ս. Բուսօլա, «Զւիցերիա ազատ ժողովրդական հանրապետութիւն» [Թարգմ. Ս. Տէր-Անանեան — 15
10. Վ. Բրակէ, կորչեն Սօցիալ-Դեմօկրատները, [Թարգմ. Մ. Տ. Շևա — 12

11. Բ. Ս. Կապիտալ և Աշխատանք, Թարգմ.
Ա. Յ. — 20
12. Է. Վանդերվելդ, Իդեալականութիւնը Մարք-
սի դմի մէջ, Թարգմ. Ս. Տէր-Անանեան — 20
13. Վիկտոր Չերնով, Սօցիալիզմի վերջնական
լուեալը և ամենօրեայ կռիւր. Թարգմ. Ս.
Տէր-Անանեան — 20

Տպագրւում է և շուտով լոյս կը տեսնի՝

№ 14 Современная Армянская Литература
выпускъ II-й.

Эскизы и рассказы Ав. Агароняна и В
Папазяна, въ переводѣ съ армянскаго Ара-
кела Микаэльяна—Дервишъ Г. А. и Ив. Сар-
кисяна, цѣна — 50

Իրմել հրատարակչին՝ Армянскъ. (Тавричес-
кой губерніи) Ивану Давидову, և Կովկասի
լայանի գրափանտոներին.

Симферополь. Михаилу Гавриловичу Аль-
янаки, Дворянс. улица д. Уланова.

Евпаторія. Магазинъ Е. Нахшунова—Е. Па-
халову.

Ѳеодосія. Полицейская ул. д. Бакалова С. И.
Хорозовой.

Одесса. Успенская ул. № 60 Л. Х. Асвадуровой.



ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

